



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99-82

7-94



564
7/II 521

904

Հ. Կ. Պ. Գ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿՐԹԱՆԳ

564
7/II 521

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Լ. ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

8/II

Арм.
3-204a

891.99-82
7-94-

Հ. Կ. Պ. Գ.
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

3-204a 2011-05

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՍԿՄՆԱԿ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅԵՎ ՊԱՏՄՎ ԱԾՔՆԵՐԻ
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ



ИИВ. № 20957

Г.П.Б. в Лнгр. Ц
О.Э. 1932 г.
Акт № 212

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
« ՀՅՈՒՄԻԱՆԻՏԻՆ ԿՈՎԿԱՍՍ »
■ ■ ■ Ռ Ո Ս Տ Ո Վ - Դ Ո Ւ

1932

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ
Ս Կ Ս Ն Ա Կ



39939-63



КНИГОИЗДАТЕЛЬСТВО
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Վ. ԾՈՎՅԱՆ

Կասկած չկա, վոր խորհրդային գրականությունը, առանձնապես պրոլետարական գրականությունը, հանդիսանում եմ մենանշանակալիցն և ամենաառաջավորն ամբողջ աշխարհում, իր գաղափարական բովանդակությամբ, իր ընդգծած ուղիներով:

Պատմության մեջ չի յեղել մի ուրիշ հասարակարգ, գոյություն չի ունեցել մի այնպիսի եպոխտ, վոր ստեղծեր վոգեկորության և ստեղծագործության այնպիսի անսպառ աղբյուր, ինչպիսին ստեղծվել ե սոցալիզմ կառուցող յերկրում—Սորհրդային Միության մեջ:

Յեվ իսկապես: Միթե սոցիալիզմի կառուցման յուրաքանչյուր հաջողությունը, սոցիալիստական շինարարության ամեն մի հսկան—Մաքսիտագորսկը, մի Սեւմաշը, մի Ստալինգրադի տրակտորային գործարան և այլ հարյուրավոր ու հազարավոր փառավոր կառուցումները գեղարվեստական ստեղծագործության հիանալի աղբյուրներ չեն ներկայացնում պրոլետարական և խորհրդային գրողի համար: Սոսք չկա, վոր բուրժուազիան նույնպես կատարել ե խոշոր կառուցումներ, վորոնք տասնյակ և հարյուրավոր տարիների ընթացքում համարվել են բուրժուական հեղինակների կողմից «քաղաքակրթության նվաճումներ»: Սակայն ի՞նչ վոգեկորության աղբյուր կարող ե հանդիսանալ բուրժուական կառուցումը, վոր կատարվել ե «սեփական» պրոլետարիատի և գաղութային ժողովրդների անլուր և ստրկական շահագործման, նրանց արյուն-քրտինքի զնով և ծառայում ե մի խումբ թալանչիների, տիրող դասակարգերի անաշխատանք բարեկեցությունը:

Սորհրդային յերկրի սոցիալիստական վերակառուցումը կատարվում ե միլիոնավոր բանվորների, կոլտոզնիկների գիտակից, նվիրված և վոգեկորված աշխատանքի միջոցով, մի վերակառուցում, վորի նպատակն ե անդասակարգ կոմունիստական հասարակարգի ստեղծում, վորտեղ չկան շահագործողներ և շահագործվողներ, վորտեղ աշխատանքը դառնում ե պատվի, հերոսության և ստեղծագործության աղբյուր, վորտեղ նա (աշխատանքը) առաջին անգամ իսկապես վոր ազատվում ե ամեն տեսակ կապանքից:

Ով չի տեսնում սկզբունքային տարբերությունը բուրժուական «կառուցման» և սոցիալիստական կառուցման—նա միայն դասակարգային թշնամու գերին ե, նրա աչքաբաց կամ կույր գործիքն ե:

Սոցիալիզմի կառուցման ֆրոնտում մենք ձեռք ենք բերել համաշխարհային նշանակություն ունեցող հաջողություններ: Հնգամյակի 3-րդ, վճռական տարում մենք ավարտեցինք սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը մեր յերկրում: Կուսակցության 17-րդ

կոնֆերանսը տվեց 2-րդ հնգամյակի մեծ աշխատանքների ընդհանուր բովանդակությունը, վորի (2-րդ հնգամյակի) քաղաքական առաջնակարգ դերավորումը դասակարգերի վերացում և սոցիալիստական հասարակարգի կառուցումն է:

Ինչպես և հասնում պրոլետարական գրականությունը մեր յերկրի արագաթափ սոցիալիստական առաջխաղացման տեմպերին: Դժբախտաբար պրոլետարականության զարգացման տեմպը հետ և մնում սոցիալիստական վերակառուցման տեմպերից:

Կասկած չկա, վոր պրոլետարական գրականությունը, մասնավանդ վերջին տարիների ընթացքում, խոշոր հաջողություններ և ձեռք բերել թե՛ ձևի, թե՛ բովանդակության և թե՛ գեղարվեստական վերարտադրության ասպարեզներում: Մենք ունենք մի շարք գեղարվեստական արտադրություններ պրոլետարական գրողների, վորոնք հափըշտակությամբ են կարգացվում վոչ միայն մեր յերկրի, այլ նաև կապի տալիստական յերկրների պրոլետարական և աշխատավորական ընթերցողներին կողմից: Մեծ պայքար և տարվել և տարվում սխեմատիզմից ազատվելու գեղարվեստական ստեղծագործության մեջ: Այդ ասպարիզում արդեն վորոշակի յեն վերջին տարիների պրոլետարականության նվաճումները:

Անողոր և յեղել նաև այն պայքարը, վոր տարել և պրոլետարական գրականությունը հակալինիյան, մանր բուրժուական և բուրժուական գաղափարախոսությունների և թեորիաների դեմ գրականության ասպարիզում: Կուսակցության գլխավոր գծի հիման վրա, մինչև վերջ մերկացվել և մերկացվում են բողոքանքի, արոցկիստական, վորոնսկիական, պերեվերդեական և այլն հակալինիյան տեսությունները: Սակայն իր այս անվիճելի նվաճումների հետ միասին պրոլետարական գրականությունը, ինչպես վերև ել շեշտեցինք, դեռ չի հասնում սոցիալիստական վերակառուցման տեմպերին, նա դեռ ամբողջապես չի բավարարում մասսաների հսկա չափով աճող պահանջներին:

Մեր ապրած եպոխան չափազանց մեծ եպոխա յե, վորպեսզի կարելի լինի նրա պահանջները հեշտությամբ բավարարել: Մեր եպոխան արժանի յե ավելի բարձր ստեղծագործության: Տալ եպոխային արժանի ստեղծագործություն, սեղծել «գրականություն Մագնիսսուսոյը» — ահա հիմնական խնդիրը, վորին լուծում պե՛ս և Տա պրոլետարական գրականությունը:

Նա «մարդկության գեղարվեստական զարգացման մեջ մի քայլ առաջ պիտի գնա»:

Հեշտությամբ, առանց համառ պայքարի չե, վոր պրոլետարականությունը պիտի լուծի այդ դժվարին խնդիրը:

Սակայն նա այնուամենայնիվ լուծելու յե նրան:

Ինչպես ասացինք, վոչ մի հասարակարգ, վոչ մի եպոխա, ստեղծագործության այնպիսի հսկա աղբյուր չի ստեղծել, ինչպիսինն ունի մեր որերի պրոլետարությունը: Սակայն աղբյուրից ողտվել պետք և կարողանալ հմտությամբ, պետք և կարողանալ գեղարվեստականորեն վերարտադրել մեր որերի այն մեծ յեռուղեղը, վորն ստեղծվել և նոր, պատմության մեջ դեռ չտեսնված հասարակարգի կառուցման շուրջը: Պետք և ցույց տալ այն նոր մարդուն, սոցիալիզմի կառուցման հերոսին, հար-

վածայինին իր ամբողջ բազմակողմանիությամբ, առանց շարունի, առանց սխեմատիզմի, թափանցելով այդ նոր մարդու «ներքին» համոզմունքի մեջ, գեղարվեստորեն վերարտադրելով նրա հոգեբանությունը, վոր զրդում և նրան դեպի հերոսություն, մի հերոսություն, վոր իր գաղափարներով, իր ներքին զրդումներով անհամեմատ ավելի բարձր և քան պատմության մեջ մինչև այժմ յեղած բոլոր հերոսությունները:

Պատմության ամբողջ ընթացքում տիրող դասակարգերը խուճկ ու խաչվառով գովաբանել են իրենց հերոսներին—վորոնց ամբողջ ծառայությունը կայացել և նրանում, վոր նրանք մարտնչել են այդ նույն տիրող դասակարգի իշխանությունը անասան պահելու կամ մի նոր դասակարգի իշխանություն հաստատելու՝ հասարակության մյուս խավերին ճնշելու համար: Հանրախների, Հուլիոս Կեսարների, Նապոլեոնների, Մամիլիոյանների, Կարլբադիների հերոսության եյուրությունը հենց նրանումն և կայանում:

Առաջին անգամն է, վոր պատմության մեջ միլիոնավոր մարդիկ, վորոնց ազգանունները վերջանում են ովերով, սկիներով, բերգերով, յաներով, ողլիներով, իձեներով և այլն, դառնում են իսկական հերոսներ անդասակարգ, առանց շահագործման հասարակարգ կառուցելու մեծ աշխատանքում, ըստ վորում այդ միլիոնավոր մարդկանց յերկրի իշխանությունը վոչ միայն չի խանգարում, չի հալածում, չի գնդակահարում, այլ դեկավարում և, ոգնում և, վորովհետև այդ իշխանությունը նույն այդ մարդկանց արյունից ու մսիցն է, վորովհետև այդ իշխանությունը դեկավարվում և աշխարհի ամենահեղափոխական կուսակցության կողմից:

Պատկերացնել գեղարվեստական արտադրության մեջ պատմական այդ մեծ եպոխայի մեծ գործերը և իսկական հերոսները հարազատորեն, խորությամբ, սպասարկել գեղարվեստորեն սոցիալիստական շինարարության հերոսներին և դրանով զարկ տալ, վոգեկոչել նոր միլիոնների դեպի նոր մարտեր սոցիալիզմի կառուցման ֆրոնտում—միթք դա չափազանց պատվավոր խնդիր չե, վոր զրված և պրոլետարականության առաջ իր ամբողջ մեծությամբ:

Սակայն ինչ և պատճառը, վոր դեռ պրոլետարականությունը հետ և մնում մեր յերկրի սոցիալիստական հառաջխաղացման աճից: Մի՞թե չկան գաղափարներ, մի՞թե բացակայում և ստեղծագործության աղբյուրը, մի՞թե գոյություն չունի պետական ոգնություն: Ինչպես վերևից ել շեշտեցինք, իր գաղափարական հագեցողությամբ պրոլետարական գրականությունն ամենից նշանակալիցն է ամբողջ աշխարհում: Գաղափարի, աշխարհայացքի, ստեղծագործական աղբյուրի բացակայությունը չե, վոր դեռ հետ և պահում պրոլետարականությունը մեր յերկրի ընդհանուր տեմպերից, պրոլետարական ընթերցողի աճող պահանջներից: Պրոլետ-գրողի գաղափարը—կոմունիզմը, ամենից բարձրն է ամբողջ աշխարհում, պրոլետ-գրողի աշխարհայացքը—դիալեկտիկական մատերիալիզմը—ամենից գիտականն է, նրա ստեղծագործությունն աղբյուրը, սոցիալիզմի կառուցումը, մեր որերի նոր մարդը, մեր որերի նոր հերոսը ամենից առաջն է և անսասան:

Սակայն ուրիշ բան և ունենալ, կամ հայտարարել իրեն կողմնակից, հետևորդ մեծ գաղափարի, գիտական աշխարհայացքի, ուրիշ բան և տիրապետել այդ աշխարհայացքը: Մեր պրոլետարողները դեռ լավ չեն

տիրապետում դիտարկելիական մատերիալիզմին (խոսքը բացառութ-
յուններին մասին չէ), վորը պրոլետարիատի աշխարհայացքն է կազ-
մում: Ուրիշ բան է ունենալ վոգելիզմի, ստեղծագործության
անսպառ աղբյուր, ուրիշ բան է կառուցանալ, հմտություն ունենալ այդ
աղբյուրից ոգավելու: Այդ հմտությունը դեռ բավարար չէ մեր պրո-
լետգրողների մոտ:

«Ոտար» և հայ գրականության կլասիկների՝ Պուշկինի, Տոլստոյի
Բայլզակի, Ռաֆֆի, Շիրվանզադեյի և այլն աշխարհայացքը շատ
ավելի ցածր մակարդակի վրա յեր գտնվում, քան պրոլետգրողների
աշխարհայացքը—սակայն կլասիկները շատ ավելի լավ և լրիվ եյին
տիրապետում բուրժուազիայի աշխարհայացքին, քան պրոլետգրող-
ների մեծամասնությունն է տիրապետում պրոլետարիատի աշխար-
հայացքը:

Պուշկինն և Դյոթեն, Ռաֆֆին ու Շիրվանզադեն ստեղծագործու-
թյան շատ ավելի սահմանափակ աղբյուր ունեյին, քան ունեն մեր պրո-
լետգրողները, սակայն կլասիկները ավելի մեծ հմտությամբ եյին կարո-
ղանում ոգտագործել այդ սահմանափակ աղբյուրները իրենց ստեղ-
ծագործության համար:

Յեվ այդ հասկանալի չէ:

Հմտություն, աշխարհայացքի կատարյալ տիրապետումը ուռա-
յով և միանգամից ձեռք չի բերվում: Բուրժուական գրականության
հսկաները դարերի փորձ և վարժություն ունեն իրենց հետևից: Պրո-
լետարական գրականությունը նոր է միայն ստեղծում և իր փորձը և
իր վարժությունը և իր հմտությունը, վորովհետև յերիտասարդ է
դեռ այն հասարակարգը, վորին ծառայելու չէ կոչված նա և վորից նա
հենց ինքը ծնունդ է առել: Սակայն մենք բոլշևիկներ չեյինք լինի,
յեթե պրոլետ-գրականության զարգացման խնդիրը թողնեյինք ինքնա-
հոսին, յեթե մարտական կերպով խնդիր չգնեյինք պրոլետ-գրականու-
թյան առաջ ընդհանրապես և յուրաքանչյուր պրոլետգրողի առաջ մաս-
նավորապես—սիրապետել պրոլետարիատի աշխարհայացքին իր ամբողջ կա-
սարելությամբ, ձեռք բերել ուսման միջոցով, համառ աշխատանքով գրա-
կան ճեխնիկային սիրապետելու հմտություն, ոգտագործել կլասիկների
փորձը, ամբողջությամբ ոգտագործել մեր հասարակարգի առաջ բերած
ստեղծագործական հարուստ աղբյուր, վորովհետև կուսակցությունը ձե-
զանից պահանջում է, բանվոր դասակարգը ձեզանից պահանջում է՝

— Եպոխային արժանի ստեղծագործություն, «Իրականության Մագ-
նիստսոյը»:

Կուսակցության այդ մարտական պահանջը պրոլետգրականու-
թյունը, պրոլետգրողները կարող են կատարել միայն, ինչպես ասա-
ցինք, համառ աշխատանքի, բոլշևիկյան դաստիարակության, պրոլե-
տարիատի աշխարհայացքի լիակատար տիրապետման, մեր յերկրի
սոցիալիստական կառուցման բարդ և դժվարին պրոցեսների հետ ծա-
նոթանալու, նրանց մեջ մասնակցելու գրական տեխնիկայի տիրապետ-
ման միջոցով:

Իսկ այս բոլորը չի կարելի ձեռք բերել առանց ուսուցման: Սո-
վորել, դասխարակվել, վորքան կարելի չէ ռաս, վորքան կարելի չէ լավ:
Այս առանձնապես անհրաժեշտ է մեր Հյուսիսային Կովկասի հայ պրոլե-
տգրողներին:

«Անկասկած է, վոր բոլշևիկյան դաստիարակության ամենա-
լավ դպրոցը հանդիսանում է սոցիալիստական շինարարությունը և մաս-
նակցությունը նրա մեջ: Մշակելով պայքարի հմտություն և դաստիա-
րակելով նոր, կոմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքը, սո-
ցիալիստական շինարարության այդ պրոցեսը հսկայական դաստիա-
րակչական նշանակություն ունի, քանի վոր բոլշևիկը նա յե, ով ա-
ռաջին հերթին ակտիվորեն մարտնչում է կոմունիստական հասարա-
կության համար» (Պոստիշև):

Այո, հատկապես սոցիալիստական. շինարարության պրոցեսը
հանդիսանում է մեր պրոլետ-գրողների դաստիարակության համար
ամենալավ դպրոցը: Յեվ վերջին տարիների գրական արտադրու-
թյունը ցույց են տվել, վոր ամենահաջողված ստեղծագործություններ
տվել են հատկապես այն գրողները, վորոնք ավելի մոտիկից են ծա-
նոթացել և մասնակցել սոցիալիստական շինարարության պրոցեսներին:

Հյուսիսային Կովկասի հայ պրոլետգրողներն ապրում են մեր
հսկայածավալ յերկրի չափազանց նշանակալից մի յերկրամասում, վոր-
տեղ սոցիալիստական շինարարության պրոցեսներն ավելի ուկյեֆ
են, վորտեղ պրոլետարիատի պայքարը, կոմունիստական կուսակցու-
թյան դեկավարությունը, յերկրի սոցիալիստական վերակառուցման
համար, ունի իր հերոսական եղերը, իր ամենահետաքրքիր դրվագները:
Մեր յերկրամասում հիմնականում ավարտված է համատարած
կոլեկտիվացումը և կուլակության լիկվիդացիան վորպես դա-
սակարգ, ներկայումս գնում է յերկրամասի վողջ գյուղական տնտե-
սության տեխնիկական սպառազինման հետաքրքիր պրոցեսը: Գը-
րոգնու հերոսական նավթագործները կատարեցին հնգամյակը 2 և կես
տարում (և միթե միայն Գրոգնու նավթագործները) հսկայական, նախ-
կին գյուղացիական, հետաձագ յերկրամասը վերածվում է մեր աչքի
առաջ ինդուստրիալ յերկրամասի:

Միթե այս բոլոր պրոցեսները բոլշևիկյան դաստիարակության
հիմնալի դպրոցներ չեն մեր պրոլետգրողների համար: Միայն չը-
պետք է հեռվից դիտել այդ պրոցեսները, այլ ուսումնասիրել նրանց,
մասնակցել նրանց մեջ, յեթե ուզում եք դարաշրջանին արժանի գը-
րական ստեղծագործություններ տալ:

Հրատարակության տալով Հյուսիսային Կովկասի հայ պրոլետ
գրողների, մեծ մասամբ սկսնակների, յերիտասարդ բանվորների, կու-
լտուրիկների այս փոքրիկ ժողովածուն, հրատարակչությունը առաջին
հերթին փաջալեռական նպատակ է ունեցել: Անկասկած է, վոր ժողո-
վածությունը ապագրված ստեղծագործությունները մեծ մասամբ առաջում
են սխեմատիկ ցավով: Կոլտուրիկ, բանվոր պրոլետ-գրողը տեսնում
է, վոգելիզմում է իր շուրջը կատարվող պրոցեսներով, նա ցանկու-
թյուն ունի դեղաբուսական խոսքի միջոցով արտահայտել իր հիաց-
մունքը, իր խոհերը, իր վոգելիզմությունը. ավելի տաղանդավորներին,
ավելի փորձվածներին այդ հաջողություն է նշանակալից չափով—դեռ
անփորձներին, հմտություն քիչ ունեցողներին—ավելի նվաղ չափով:

Սակայն փորձ և հմտությունը ձեռք բերվելիք բաներ են: Այսօր
չկան, վաղը համառ աշխատանքից հետո, կլինեն: Գլխավորը բոլշե-
վիկյան համառությունն է սովորելու, գրական տեխնիկային, պրոլե-
տարիատի աշխարհայացքը տիրապետելու մեջ է կայանում:

Իսկ այս տեսակետից դեռ չափազանց մեծ բան ունեն անելու Հյուսիսային Կովկասի հայ պրոլետ-գրողները:

Մոտակա շրջանը հայ պրոլետգրողների համար պետք է լինի ուժերի հավաքման, համառ ուսման և աշխատանքի շրջան: Յեթե, նրկատի ունենան լավ գրական ուժերի յերիտասարդութունը, անփորձությունը, այս ժողովածույի մեջ մտնում են այնպիսի գրական արտագրություններ, վորոնք, ուղղակի պետք է ասել, բավականին թույլ են տպագրության համար, ապա քանի մենք առաջ ենք դնում, մեր ներողամտությունն էլ պետք է աստիճանաբար պակասի: Ընթերցող մասսայի պահանջները բարձրանում են և պետք է բավարարել այդ պահանջները: Կոմունիստական սնապարծությունը, մեծամտությունը վտանգավոր թշնամիներ են պրոլետարական գրական ստեղծագործության համար:

Մենք հավատացած ենք, վոր յերկար չի անցնի այս ժողովածույի հրատարակությունից, յերբ Հյուսիսային Կովկասի հայ պրոլետգրողները, համառ և ժրաջան աշխատանքից հետո—ընթերցող մասսաներին կհյուրասիրեն ավելի շնորհալի, ավելի հաջողված, ավելի գեղարվեստական և գաղափարապես ավելի տոկուն ստեղծագործությունների մի ուրիշ ստվարանջ ժողովածույով:

ՏԱՎԱՐԻՉՉ ՍԵԼՄԱՃ

Ա. ՀՈՎԱՆՆԻՍՅԱՆ

Давольно жить законом,
Данным Адамом и Евой.
Клячу истории загоним,
Левой!

Левой!
Левой!

В. В. Маяковский
„Лезый марш“ (Матросам)

1.

Բուրժույի յերկում, քե
Յերկաթի հուր լեռներ
Յցվեց.

Կամ ելեկտրովալը
Շանքե արփից.

Բուրժույի
Յերկում, քե տրակտոր
Շրջե հողը նավի նման.

Կամ
Վոնց հրաբուլիս, վոնց
Դինամիտ ահագնազարկ.

Դու...

Դու...

Դու...

Դու կլնես միայն, իմ այս
Յերկի, այնքան

Հեռավոր,
Յերկաթին կարոտ

Դաւեսերի համար,
Հազար

Հերոսից բուրժույի յերկի
Հազար անգամ

Լավ,

Տավարիչ

Սելմա

2.

Այն մեջքերը կուռ
 Քո հիմքերի տակ,
 Այն դեմքերն
 Հպարտ,
 Արեւիք ել վառ,
 Քո պատերի տակ
 Քրտինք քափող:
 Իմ յերկրի
 Մարդն է,
 Մարդն է,
 Մարդն է ջուռ,
 Իմ քնկերներն են
 Քո հեղձը կոփող,
 Քո գործ յերախների
 Շեկ հուրը խառնող,
 Իմ քնկերներն են
 Բույր
 Տվող
 Կյանքին,
 Իմ քնկերներն են
 Զահեղ, եմտուկիաստ,
 Վոր հողը սավեսի
 Հրով են խառնել,
 Յես եմ փռումաւ
 Տափարիչ
 Սեղմաւ:

3.

Յե՛վ հազար կոկորդ
 Քո խիւղն է հիմա
 Աւառահին հուզում:
 Յե՛վ անծիր ու լայն
 Մեր այս յերկրի դասերի վրա
 Քո յերգն է զնգում,
 Քո յերգը հպարտ, քո յերգը
 Հուզող
 Քո յերգը
 Բազում:

3.

Յե՛վ յեղնում են հա՛
 Բարձրանում հիմա՛
 Դեզերի
 Նման աշխարհաճաճան,
 Հարվածի հասուկ
 Թափով ահարկու,
 Այն քո
 Ելեկերիկ մուրհերից
 Հոսող
 Իմ այս
 Յերկրում
 Բյուրավոր
 Կայան:

5.

Ու իմ նայիլայն, բազում
 Յերկրի սեզ լեռների
 Պես,
 Իմ յերկրի կրծքին
 Ծլում են ելի
 Հազար
 Քեզ նման, քեզ պես
 Ունման
 Յերկաթե
 Լեռներ:

6.

Յե՛վ քո արեւային
 Յերկաթ պատերի տակ
 Թաղեցինք
 Հազար վիշ ու
 Տանջանք,
 Հազար անգամ գիշեր,
 Հազար յեզնի արտ,
 Յե՛վ միտերներ
 Դեղին,
 Բաղդի ժամացույցներ
 Ահաղաղներին:

Բուլեմիկյան կամֆի
 Հգորական Սելմա...
 Դու մեր
 Ահեղ ցասում,
 Դու մեր
 Յերկաթ վերել
 Յեկ ծանր, ծանր,
 Մասիսից ել հասսաս,
 Հիմալայից խոթիս,
 Անաստան:
 Պեսֆ ե վոր օրջի
 Յեկ վոր
 Շրջում ե
 Մեր հողը յերկրի յեկ հինը
 Մառոդ,
 Ինչպես մի սիսան
 Ովկյանոսյան
 Նավ,
 Հարավի են սապ
 Արեւի մերձ,
 Շրջում ե
 Դովեր,
 Յեկ
 Զբեր
 Խառոդ:

Խառ գորգի պես
 Փռված ծիրանային
 Դաւեսեր...
 Յեկ հեռվում փռվում են
 Ել դաւեսեր,
 Բայց ահա յեկում են
 Ու արեւվում
 Դաւեսերը,
 Վաւեսերը,
 Մարդիկ,
 Ինձեներ...

Տեխնիկ ու տեխնոլոգ-
 Բայց ահա յեկում են
 Արեւվում
 Դաւեսերը,
 Մարդկային բանակներ,
 Կառուցուցներ
 Անթիվ,
 Յեկ հազար
 Գլուխներ ձգնում են
 Հիմա՝
 Դաւեսերը օրջիլու
 Կառուցելու
 Անթիվ:

Մեկն արդեն զծում ե
 Իր բլուկնոսում,
 Մյուսը գրում,
 Մեկն արդեն ֆանդում ե,
 Հեծում ե հողը,
 Մյուսը կրում.
 Մեկի մուրնի
 Հարվածը
 Խոսում ե հուր,
 Յեկ կրակ կա նրանց մեջ
 Յեկ ջուր:

Ահա՝ ինձեների
 Բլուկնոսներում,
 Գծված մի լայն
 Շրջան,
 Գծեր,
 Գծիկներ,
 Շրջանների՝
 Կանվա
 Կարկիճով բլուրած
 Բլուրավոր առուներ,
 Խաչածեղի հիմքեր,
 Աւսարակներ ցցում,

Յեվ այդ
 Չոր
 Թվերի
 Ու
 Գծերի հանդեպ,
 Շունչ ե առնում
 Մարդը յեվ հյուսում
 Կանվան,
 Շրջում
 Յերկրի կուրծքը,
 Ու բաղում
 Յենեմի
 Յերկաթի
 Լյարդը:

11.

Նրանք ֆրսնում են,
 Շաղախում ցեմենթ
 Կարծես
 Բրնձով,
 Վառ դեմքերին
 Պուր... պուր...
 Շողում ե յեռանդը,
 Հեղեղվում ե դառը
 Բազում հույզերով,
 Յեվ անա յելնում են:
 Չոր դառերի վրա,
 Պատեր,
 Դռներ,
 Առաքակներ
 Յից:
 Ու իարիսիսի պես
 Թաղվում են հիմքերը,
 Աղյուսները փաթարվում,
 Ձուլվում են իրար,
 Յեվ դու բարձրանում ես,
 Բարձրանում
 Դառում,
 Վրնց անոթի
 Սար:

12.

Հեյ, տղիք ջան,
 Թեվ սվեփ
 Շուռ սվեփ
 Հողը,
 Թող վողջ յերկիրն
 Ձգա՝
 Մեր զարկերի
 Դողը:
 Իմ յերգը ձեր յերգն ե.
 Իմ հոգին
 Ձեր յերգը,
 Իմ յերգը ձեր վերելքն ե,
 Ու արեվն
 Առլեկին:
 Յես պոես մի ջահել,
 Յեվ յերգում եմ
 Իմ ջահել
 Ընկերների
 Հեվքը,
 Յես յեկել եմ ձիւմա,
 Ինձ բերել ե այսեղ
 Ձեր յեռ կամքը ամուր,
 Յեվ ձեր հեմքս յելք:
 — Ռազմաշունչ ե մեր հոգին
 Յեվ պայքարի գնդակ,
 — Յերգիր պոես, յերգիր
 Մեր ծով՝ յերկիրն անցակ:
 — Հեյ, տղիք ջան,
 Թեվ սվեփ,
 Շուռ սվեփ հողը,
 Թող վողջ յերկիրն զգա,
 Մեր զարկերի դողը:
 Իմ յերգը ձեր յերգն ե,
 Ձեր յերգը
 Իմ հոգին,
 Իմ յերգը ձեր վերելքն ե
 Ու արեվն
 Առլեկին:

Ու չոր դաւեսերի մեջ,
 Են դաւեսերի վրա,
 Շունչ առավ
 Յերկաթը,
 Քարը,
 Հողը,
 Ու են ծիրանային
 Դաւեսերը խաւ,
 Հագան
 Յերկաթի
 Մաւսնչող բողբոջ,
 Ու աւսերն,
 Անխնա այրող
 Արեւի դեմ,
 Են խոպան դաւեսերում,
 Զուլեցիմ մի նոր
 Արեւ,
 Ավելի վաւեր,
 Յեւ հազար ձեռքերի
 Ահաւելու զարկերից,
 Յերկնեցիք,
 Ծնեցիք,
 Ծիւցիք
 Դու՛
 Յեւ քո յերկունք
 Վահագնի յերկունքից
 Ավելի
 Անեղ,
 Յեւ քո յերկունք
 Հոկտեմբերյան անգուստ
 Համազարկերով լի...
 Քեզ հուզեցին
 Միլիոններ
 Յեւ միլիոն
 Գնդեր:

Հնգամյակի յերրորդ տարվա հնգվորներին,
 Կոլխոզային սաք օրսերին արեւաեան.
 Խրճաղիզված ավտոն բշոյ շոքեր տղին,
 Վոլգույն—վոլգույն:

Արեւը հուր ջերմ անձրեւեց
 Դաշտի վրա,
 Ծիւր յեւալ ու բոյ քաշեց
 Զահեւ, ջիւլան.
 Հասկը փայլեց ճաւայական
 Սաթի նման,
 Արտերը շեկ դաշտում դարկին
 Վոսկե վրան:
 Որը բացվեց կաթնաշաղաղ
 Շուշանի պես,
 Հորանջելով յեւալ արեւն
 Լեռան ծերակից.
 Շոքեր տղի դեմքից մի բուռ
 Քրտինք թափեց,
 Ավտոն սուրեց ու սլացավ.
 Սայլը ճուռաց ու սարսափեց:
 Արտերը մեղմ հողնակոհակ
 Շորորացին,
 Զեփյուռ մի հով քնքշորեն
 Հասկը շոյեց.
 Արտում լոյս ճպուռների
 Յերգը տաղտուկ,
 Յեւ շոինդը մանդաղների
 Հասկն համբուրեց:
 Մի գեղ աղջիկ, գլխին կարմիր
 Լաչակ կապած,
 Թեւը գցած մաշին քշող
 Տղի ուսին,
 Այտերը վառ յերկու բացված
 Վարդի նման,
 Հոնքերը կեռ, վոնք դիշերվա
 Կիսալուսին.

Եղ աղջկա հայացքը վոնց
 Մի սուր սվին,
 Աչքերը սեղ վառվող, կարծես
 Մի դույզ արեւի.
 Խայթալ կուրծքը ցցած արտում
 Ծիրանագույն,
 Զիյու սանձերն ամուր գրկած
 Զեռքերի մեջ,
 Ենպես քաղցր, անուշ ձենով
 Յերգ ե ասում,
 Վոնց վոր կասես հաղարան թիւ
 Սայաթ-Նովի չազն ե խոսում
 Կամսամոլ եմ տղեմ
 Աչքս վրեմ մնաց,
 Աչքս վրեմ մնաց,
 Հրեմ ճամբի վրեմ
 Զիյով եմ ուր գնաց:
 Եյ, հնձվոր տղա,
 Բշիւր մաշինդ շուռ,
 Յեւ սուր սրիւր հնձող
 Մանգաղների շուրթը.
 Մաշինդ դեսն արա
 Մի ես արտը մտի,
 Բարաքյաթին դուրբան
 Եդ ջահել ձեռներիդ.
 Մաշինդ դեսն արա,
 Ես վերելքն առնենք,
 Ես գլխիցը մանենք
 Կոխոզի շին արտը,
 Վոր մինչ ես իրիկուն
 Են ձերիցը գուրս դանք
 Ու չթառամի հեչ
 Յերեսիդ կաս վարդը:
 Յեւ զիլ զրնգոցով
 Մանգաղներն են յերգում
 Մաշինքը փռում են
 Շեկ արտերի վրա:
 Սոցմրցումն ե զարկում
 Ամեն սիրտ ու մկան,
 Ամեն սիրտ ծփում ե
 Վոնց թատերասրահ:

Հանրաներն այն ծանոթ
 Բոկոտ վոտքերիս,
 Են ծիրանի ծառը,
 Վոր վարտիկս ճղեց,
 Են շաֆրան խնձորը,
 Են դալար ուռենին
 Ուր են... ել չկան:

Են իրար խճճված
 Թթենի ծառուտը,
 Են հնձանը կտրին,
 Զոր թութը փռած,
 Են հանդիզանի
 Թղուկ զեղձենին,
 Ուր են... ել չկան:

Են հացենու տակին
 Մեր փորած հավուղը,
 Են դամշուտի մեջ
 Պահած լիմ կուժը,
 Են բարձր ու մեծ
 Դավրիժ ընկույզը
 Ուր են... եյ, ուր են,
 Ուր են... ել չկան:

Ափոյիս անկա՛
 Պստիկ կեռասենին,
 Խոպոպիկ են ֆնդուխտը,
 Վոր ինձ պես հասակ,
 Մանկություն են առել,
 Զիջել են տրտունջով
 Իրենց կյանքը դալուկ,

Մեր այս նոր յերկրի,
Նոր տունի համար,
Վոր մեր կյանքն արյուն
Քարափների ներքո,
Չարտնջա ելի,
Վորպես լեռան վհուկ:

Շրա՛խ-շրախկոցով
Սեվ քարափը պայթում,
Ժայռերը տենդում են
Դինամիտի ջերմից՝
Կարծես հակամարտ են
Յելել վերջին անգամ
Դերվիշային քնից:

Ու ծանր, անդրժեղի
Իջնում են դեպի խորը
Ցամենալը, յերկաթը,
Հուր կրակ ու ուժով,
Հեյդերներ ե դարկում
Չանգուն կրքամու,
Իսկ ավաղը թումբ:
Ենքան կարոտ քաշած
Սիրտս փրփրում ե.
Խինդը Չանգույի պես
Հեղեղում ե հոգիս.
Արդյոք, ունեցի՞լ եմ
Ցեա այնպես մանկություն,
Ինչպես բարձունքները
Այժմեական թովքիս:

ՏՐԱԿՏՈՐԻՍ ԸՆԿԵՐՈՋՍ

ՈԿՏՅԱՐԻՆԱ ՎԱՐՈՍՅԱՆ

Քըշտել ես բազուկներդ ջան ու կորել մեջքդ հաղթանդամ.
Քրտնաթոր, հարվածային թափով
Տրակտորի վինտերն ես յուզում:
Յերբ հզուց դարունը բացվի ու շողա
Արեվն հանդերում,
Ցերբ անձրևով չոր հողը թացի,
Ո՛ր, գիտեմ, գիտեմ ժրաշան, պիտ յեղնես
Արեվից ել վաղ,
Պիտ նստես նժույգիդ ուսին,
Պիտ զնգա մաշինդ պողպատ,
Կոլխոզի հանդերի դռին:
Ցեվ այսօր դեռ դարուն չեկած,
Բենզինոտ բլուզը հագիդ,
Քրտնաթոր դեմքով ժրաշան
Յուզում ես ու կռում մաշին:
— Տղերք ջան, գոչում ես հպարտ—
Ուժ տվեք, ձեր տոկուն բաղկին,
Ո՛ւժ տվեք վոր մեր բրիգադան
Բայլշիվիկյան 2-րդ ցանին
Նոր բաց դաշտերին նվեր զրկե
Պողպատյա մաշին,
Իսկ քո բրոնդյա դեմքից քրտինքն ե
Ծորում կաթ կաթ,
Ո՛ր, գերված այսօր քո թափից, յերդում ես
Բազուկդ հաստատ՝
Թշուռ ե պողպատը կարմիր,
Կայծերն են սփռվում չորս դին,
Շարժվում են բազուկներդ անհաղթ
Կռում եք ու կռվում մաշին:

ՆԱՄԱԿ ԲԱՆԱԿԻՑ

ՈԿՏՅԱՐԻՆԱ ՎԱՐՈՍՅԱՆ

Յոթը տարի յե, Վաղո,
Վոր մենք չենք տեսել իրար:
Յոթը տարի յե ուղիղ,
Վոր Կարմիր Բանակ մտար:

Հիշում եմ, պիտներ եյիր դու,
Կարմիր փողկապը վզիդ.—
Կամքդ հաստատ եր, Վաղո,
Իսկ կրճքիդ՝ շողշողուն մի «Կիմ»:

Հիշում եմ մի որ ժպտերես,
Հաստատուն քայլով ներս մտար,
Թե՛ քնաք բարով, ընկերներ,
Գնում եմ Կարմիր Բանակ:

Տարիներ են անցել, Վաղո,
Տարիներ յերկար այն ուրից,
Յերբ դու ժպտերես, հպարտ,
Լիաթք հեռացար մեղնից:

Իսկ այսօր նամակդ եմ ստացել,
Կարդում եմ հրճվանքով յերկար:
Գրում ես, վոր արդեն այսօր
Դառել ես Կարմիր հրամանատար:

Գրում ես, կյանքը բանակում
Տոկուն ե մարտիկի նման.
Մեր կյանքը հաստատ ե այսօր,
Շարքերը կուռ են, ռազմական:

Ի՜նչ լավ ե լինել միշտ այսպես,
Մասնակցել այս յեռուն կյանքին,
Թերթել նոր կյանքն եջ առ եջ—
Նվիրվել Կարմիր բանակին:

Կարդացի նամակդ յերկար,
Տողերը շարան առ շարան—
Աչքերս փայլեցին խինդից՝
Գրվածդ խոսքերից վառման:

Ո՛հ, գիտես, վորքան թափ ու խինդ,
Վառ հույզեր զարթնեցին իմ մեջ,
Յերբ թերթեցի նամակդ, Վաղո,
Կարդացի հրճվանքով եջ առ եջ:

Կարդում եմ նամակդ կրկին,
Կարդում եմ անվերջ, անդադար,
Հիշում եմ, պիտներ եյիր, Վաղո,
Իսկ այսօր—Կարմիր հրամանատար:

Մտել եմ ձեր դյուղը, Սոնա,
Ձեր դյուղը՝ նորակառույց, ջահել,
Ամալի դաշտերն այսօր
Շենացել, նոր շունչ են առել:

Հրճվանքով նայում եմ չորս դին՝
Ամեն ինչ նոր է ու հզոր.
Տրակտոր, մաշին, կոլեկտիվ
Ձեր դյուղն են բոլորել այսօր:

Յեզ այսօր դու յեկ առնական
Յեռանգով գործի յիս անցել,
Կախող մաշինի վրա
Հարվածային ղեկավար դարձել:

Քաղաքից եմ յեկել, Սոնա,
Քաղաքից աղմկոտ, դյուլթիչ,
Քեզ ալվառ բարև եմ բերել
Ձեր դյուղի բատրակ Համոյից:

Հիմա նա բանվոր է դարձել,
Քեզ պես հարվածային ու ժիր,
Ձուլում է տրակտոր, մաշին,
Վոր նվեր դրկի ձեր դյուղին:

Ասում է թող դգաստ միա,
Թող սիրի մաշինը ջահել,
Սովորի, կարգալ իմանա,
Ամեն ինչ նոր կյանքին վայել:

Զեֆիրա, թրքուհի աղջիկ,
Մանկության թանկագին ընկեր,
Հենց վոր քեզ տեսա այսօր,
Ապրեցի անցյալի հուշեր:

Անիծում եյիր հորդ կատաղի,
Անիծում եյիր աղաթը ձեր հին,
Վորոնք կապանք եյին դառել
Քո նոր ու ազատ կյանքին:

Զեֆիրա, հինը չես այսօր,
Նոր կյանքը փոխել է քեզ ահա,
Բռնել ես նոր ուղին բոսոր,
Քո կամքը հաստատ է հիմա:

Ել չկա չաղրա քո ուսին,
Ձեռքալ աչքերիդ սուրմա,
Վանել ես հինը քեզ ճնշող,
Ձեռք դրել մազերիդ հինա:

Զեֆիրա, ի՞նչպես չհիշեմ այսօր
Ձեր այգին, թթենին հսկա,
Վորի տակ թաղեցինք միասին
Սև չաղրադ և հուշն անցյալ:

Հղ՛ոք ե ինժեներ այս դարը—
Պլան ե մեծ գծում շտապով,
Այդ պլանով մենք մեր աշխարհը
Շինում ենք կատաղի թափով:
Հարվածային մեր բրիգադները՝
Վոնց զենք զրկած գործի վառ սերը,
Մտած դիրքերն արտադրության,
Կովում են հերոսի նման:
Աշխատանքի այն քաղցրությունը
Վառում ե մեզ հրի նման:
Վորպես ուժգին մի շատրվան,
Ցայտում ե ծով մեր խնդությունը:
Դեռ չի հուզել մեզ վո՛չ մի յերզ,
Ինչպես մեր գործը խոր համերգ:

Յեկե՛ք, յեկե՛ք, շարքերը մեր,
Հարվածային նոր ընկերներ:

Մութ հանքերում սուր քլունգները
Ջարկում ենք կայծակի նման:
Կռիվը մեր ածուխ հանելն ե,
Ածուխ ե պետք մեր Միության:
Մեր բազուկները միշտ շաշում են,
Անգամ գետից ել պահանջում են
Շարժել հազար ու մի դավոդ,
Գիշերն անել լույս առավոտ:
Տրակտորների կարիքը խիստ ե—
Թողնում ենք տրակտորներ անթիվ:
Ջնդում ե յերգը յերկաթի
Այնտեղ, վորտեղ առաջ հանգիստ եր:
Քշում ենք տրակտորները հար,
Մի թիզ հող չենք թողնում անվար:

Վառենք մի այնպիսի դարուն,
Վոր չի յեղել դեռ աշխարհում:

Աշխարհը հին՝ խարխուլ տնակը
Հիմքից, խորքից ենք հենց քանդում,
Յեվ կառուցման մեր հնգամյակը
Իրագործում ենք չորս տարում:
Յերկրի հին տեսքը մենք փոխում ենք,
Ինչ գիգանտներ դեռ բարձրացնում մենք—
Սելմաշտրոյներ մեծ, ազդեցիկ,
Դնեպրոստրոյներ վառ, գեղեցիկ:
Գյուղում ել կոլեկտիվացում ե—
Բատրակ, միջակ ու չքավոր—
Ընկերացած յեղբայր վոնց վոր
Բյուր նոր կոլխոզ ենք կառուցում մենք,
Հնի բեկոր այն կուլակին
Ջնջում ենք վոնց դասակարգի:

Հասնենք, անցնենք, բուրժույների
Առաջավոր յերկրներին:

Վերցրած դարի վողջ ծանր բեռը,
Տանում ենք մենք մեր հաղթ ուսին:
Նա դեմ ե մեզ, ում մեր արեվը
Թվում ե միշտ ազոտ լուսին:
Մեզ հետ ե նա՝ ով դիմացկուն ե,
Ով պահակի պես միշտ արթուն ե,
Ով աշխատում ե նոր թափով,
Անհոգների, ուրախ սրտով:
Մենք հարվածում ենք ծուլությունը
Յեվ ամեն տեսակի թեքում,
Թույլ չենք տա մեր կյանքում
Ապրի վոսոդ դանդաղությունը:
Ուզում ենք ինչ ե մեր յերկրին
Տիրի նորից աշխարհը հին:

Ո, վո՛չ, ո, վո՛չ, քայլենք կարգին,
Չկորցնենք թափն աշխատանքի:

Բերում ենք մենք տենչած գալիքը
Վո՛չ թե խոսքով դատարկաձայն,

, բարձրանում ես սոցիալիզմը
 Վոնց կենդանի մի կուռ արձան:
 Յերբ շունդում ես նոր տրակտորը,
 Սրա ձայնի մեջ ամբողջ ուրը
 Լսում եմք մենք պարզ, միառմի
 Սուր վտանաձայն կոմունիզմի:
 Անչափ հուզում ես գալիքը,
 Շատ սիրելի յե և ներկան,
 Ո՛հ, ինչ դյուլթիչ ե իրական
 Մեր հորդ կյանքի շարժուն ալիքը:
 Հաստատ գալիս ե կոմունան,
 Արդեն հասել ե մեր դռան:

Առաջ անցնենք ու միասին
 Բարեկ ասենք կոմունիզմին:

ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒՅԻ ՍԱՌԱ ՏԱՏԻՆ

ԱՇՈՏ ԼՈՒՍԵՆՑ

Նվեր Սոչու ռալոնի ծխախոտի ֆրոնտում
 մարտնչող հարվածայիններին:

Առավոտյան վաղ, մթնշաղին,
 Զահելի պես յեղած վոտի,
 Թողնում ե
 Բուն ու անկողին,
 Արան ե շտապում ծխախոտի:

Ժպտում ե
 Վաղ յեկողներին,
 Նեղանում ե, վոր ուշանում ես մի քանիսը.—
 «Մրափի՞ն ել լինել դերի,
 Յերբ աշխատանքի յեռուն ամիս ես:
 Մազերին՝
 Զյուն ե ծաղկուն,
 Դեմքին՝
 Խոր-խոր ալոս,
 Սրտում՝
 Գարուն ե ծաղկում,
 Կովում ե վորպես հերոս:

Տնկում ե արագ-արագ,
 Ակոսից ալոս թռչում,
 Կարծես թե
 Կռիվ մտած,
 Նորանոր դիրքեր ե նվաճում:

Զի կորցնում անգամ
 մի պահ,
 Տնկում ե թափով կատաղի.
 Շիթիկները
 Զինվորների պես կարգապահ,
 Կանգնում ես շարք-շարք,
 Ուղիղ:

Յեռանդի յեն դալիս կոլխոզնիկները,
Այրվում են կրակից ել սաստիկ—
«Ընկերներ,
Ձեր նամուսը վորտե՞ղ ե,
Բա մեզնից ել անցնի տատին»:

Ուռենու պես

Կռացած ե նա

Ու թեյեվ ցավում ե մեջքը,

Բայց չի ուզում հանգստանալ

Մինչև տնկման վերջը:

Թեյեվ յերեկոն լուռ

Սեվ վարագույր ե փռում դաշտում,

Բայց

Առանց 12.000 շիթիլ տնկելու

Նա

չի գնում

տուն:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՎԵՐԱԴԱՐՁ

ՍՈՒՐԵՆ ՀԱԿՈՒՅԱՆ

Կարոտի անզուսպ տենչերով լցված,
Հրավառ հույզերով յես ձեզ եմ դիմում,
Թռչում ե սիրտս մեր գյուղը բոսոր,
Անհուն կարոտով գալիս եմ այսօր:

Գալիս եմ ահա մեր գյուղը նոր, վառ,
Կոլտնտեսության շարքերը մտնեմ,
Ձեզ հետ միասին նետվեմ պայքարի,
Գալիք որերի ջահերը վառենք:

Պողպատից հուժկու ու միշտ հաստատուն,
Յեվ կյանքը մեր բոլր, որերը բոսոր,
Ձե վոր մեր սիրտն ե
Խնդությամբ լեցուն:

Բերում եմ սիրտս հազթ որեր գործող,
Մեծ աշխատանքի մեծ թափով արբած,
Ու մենք սիրում ենք որեր պայքարող,
Մեր վառ որերի տենչերով լցված:

Բանֆակ եմ յեկել յես...

Գեղջկուհիս, արևից խանձված,

Անցած որերի թախիժը թողած:

Բանֆակ եմ յեկել

Ու նոր, լուսավառ

Փայլուն որերով

Իմ սիրտը հուզել:

Յեվ յերբ հիշում եմ անցյալն են հին,

Խավար ու զաղիր,

Թե ինչպես տխուր յերկար տարիներ

Մութ գոմի միջին իմ կյանքն եր մաշվում,

Յերբ յես ուժասպառ, են աղջամուղջին

Գյուղի դուռքայի գոմն եյի ավլում,

Ուր ավլած կլի քթոցը ուսիս

Կրում եյի միշտ յես տարին բոլոր...

Ու յերբ հիշում եմ անցյալն են հին,

Իմ դեմ դառնում ե մի թխպոտ գիշեր,

Վոր ինչպես տխուր սիրտս լցվում եր,

Ու կյանքս մաշվում:

Որերն այդ խավար,

Վորպես սև գիշեր,

Թող հավերժ կորչեն

Ու ել հետ չգան:

Վորքան գեղջկուհիներ անցյալի փոշում

Մաշվել ընկել են խավարի զրկում,

Ու վորքան ինձ պես արևից զրկված

Գյուղացի կանայք խավարից կորել:

Նրանք քողածածկ, արևից հեռու,

Վորպես մի համր, անլեզու դառած,

Ծախվել են հոժան, իբրև չոր ապրանք,

Են հին կենցաղի ստրուկն են յեղել,

Ամթից խեղդված, տարին ամեն որ

Իրենց բախտն են լացել գոմերի միջին:

Յեվ այն քողածածկ, խավար որերին

Վորքան զործասեր կանայք են լուր,

Փակված մնացել վարագույրի յետև,

Վորքան տաղանդներ կորել են իզուր

Են հին կենցաղի, նախատինքների

Մութ ու հնացած որերի ձեռքից:

Յեվ այնպես իզուր մեռել են, կորել

Առանց հետևանք

Բյուրավոր ուժեր:

Իսկ այսօր ազատ յես գյուղից յեկած,

Բանֆակ եմ մտել կարդալու համար,

Յես ել չեմ խեղդվում ամթի տենչով,

Յես բաց եմ արել իմ աչքը փակած,

Ու իմ սիրտը վառ նոր կյանքի համար:

Այսօր տեսնում եմ բյուրավոր ուժեր

Գյուղից նոր յեկած,

Յեկել են նվեր նոր որվա համար,

Յես ել նրանց պես յեկել եմ նվեր,

Ու մենք դառել ենք նոր կյանքի ծիլեր,

Իսկական ընկեր:

Իմ հետն են այսօր բյուրավոր կանայք,

Իմ հետն են բոլոր, իմ սրտում նրանք:

Յես հուր եմ դառել արևի պես վառ,

Մենք բյուր ենք դառել

Ու շինում ենք ժիր

Նոր կյանքի համար

Փայլուն, լուսավոր,

Նոր, Կարմիր աշխարհ:

Ջերմ վողջույններ
խորհրդային
կոլխոզների
շեն սրտերից.

Բյուր վողջույններ
աշխատավոր
բանվորների
դադգյահներից:

Վողջույնները
քո հաղթաբեր
վառ գալիքին,
մեր յերգերը
գյուղն յեկած
տրակտորին,

Վոր զարդել են
հազար գյուղեր
քո մեծ թափով,
ու հերկվում են
հողերն անչափ
յերկաթակուռ գութաններով:

Հողն ե խոսում,
կյանքն ե կոփվում
արեւավառ
լույս շողերով,
նորն ե ծնվում,
հինը մեռնում
մեր բուշեվիկ
նոր աշխարհում:

Հազար վողջույն
տրակտորի
գործարանին,
վոր տալիս ե

բյուր տրակտոր
ծնվող գյուղին.
միլիոն վողջույն
բանվորների
ժիր կամքերին,
դադգյահներին,
մեր բուշեվիկ
պողպատակուռ,
կարմիր ու հաղթ
Պուտիլովին,

Ստալինգրադի
յերկաթաշեն
տրակտորի
գործարանին:

Ու տես այսոր
անթիվ սրտեր
խինդ ու խաղով
դուրս են յեկել
մեր դաշտերը
տրակտորով.
հողն են վարում,
սերմը ցանում
խորհրդային
լայն աշխարհում:
Յեւ դաշտերում
ծիծաղախտ
կոլխոզային
կյանքն ազատ
տալիս ե մեր
հաղթող գյուղին
նոր, ջահել կյանք
մեզ հարազատ:

Ջան կկանչենք
քո գալիքին,
վոր մեր սիրտը
կյանք ե առել,
միլիոն գեղջուկ,
խոփից պրծած՝
տրակտորի
դեկն են դառել:

Յերկինքը լալիս ե, վռնում ե քամին,
 Հեղեղը քարերն ե քշում լեռներից:
 Մթնեկ են դաշտեր—խավար անսահման,
 Փախիկ են բները թե մարդ, թե դադան:
 Բայց մեկը արթուն ե մռայլ այդ ժամին,
 Կանգնած նա հսկում ե կարմիր սահմանին:
 Վառվում են աչքերը, հառել ե հեռուն,
 Հրացանը սեղմած իր ամուր ձեռներում:
 — Այն ո՞վ ե ուղում, վոր հարմար այդ ժամին
 Անցնի, կամ մոտիկ դա կարմիր սահմանին:
 Այն ո՞վ ե հողնել, կամ կյանքից ձանձրացել,
 Դժոխքը գնալ այն ո՞ւմ ե վիճակվել...
 Հեղեղը քարերն ե քշում լեռներից,
 Իսկ նա լուռ հսկում ե՝ կանգնած սահմանին:
 Անցնել մեր սահմանը—այն ո՞վ կփորձի,
 — Այն ո՞վ իր գլուխը գետին կդնի:

Սարերը մթնել են, ամպերն են գոռում,
 Իսկ լուռ յես նստած եմ ճերմակ վրանում:
 Նստել ու սեղմել եմ հրացանն իմ ձեռում,
 Իսկ դուրսը վրանս անձրևն ե քերում:
 Բայց սիրտս ուռչում ե, յերբ միտք եմ անում,
 Վոր կյանքը ծաղկում ե Կարմիր աշխարհում,
 Վոր կյանքը հյուսվում ե մկան առ մկան,
 Ու վառ շողշողում ե պայծառ ապագան:
 Ու լուռ նստած եմ հրացանը գրկած,
 Վոր մեր նոր աշխարհը աճի անվտանգ...
 Սարերը մթնել են, ամպերն են գոռում,
 Իսկ դուրսը վրանս անձրևն ե քերում:

Դարնանային տենդավառ
 Դադաքը մեր հեվքոտ,
 Յեվ ստեպներն հինավուրց
 Վողջունում են դվարթ,
 Դրկել են քեզ նրանք,
 Վոնց վոր մայրը հարագատ
 Յերկաթավոր տիտան,
 Մեր յեղնող յերկրի:

Այսոր կրկին տեսա
 Դո վիթխարի դեմքը
 Վերածնվող կյանքի
 Բոսոր արշալույս,
 Բյուր բազուկներ յերկաթ
 Դեռ կերտում են քեզ
 Յերգ իմ յերկաթավոր
 Վառ ու հրակեզ:

Վորքան խինդ կա քո մեջ,
 Վորքան յերգ, բերկրանք,
 Վորքան հուզվող սրտեր
 Սպասում են դեռ քեզ,
 Վորքան խողան դաշտեր
 Դո ուժին կարոտ
 Ու դեռ վորքան սպասող
 Դո կենսաբեր կյանքին:

ԲԱՆԱԿԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻՑ

Ա. ԱՎԵՏԻՔՅԱՆ

Վերադարձա յերեկ,
Յերեկ վերադարձա
Յես կարմիր ճամբարից,
Հրացանս յուղած
Յերեկ յես վար դրի
Բուրդի վրա:

Ցե, ընկեր պետ,
Մնաք բարով, տղերք,
Ցտեսություն և ձեզ,
Մարտկոցի ավազ.
Յեվ շալակս առած
Իմ մեռոքը,
Յերեկ վերադարձա
Յես բանակից:

Այժմ անչափ առույգ
Լցված նոր հույզերով,
Լիաթոք ծծելով
Ռազմական շունչը,
Յերեկ յես վերադարձա...
Այսոր կրկին, նորից
Աշխատանքի դիրքում,
Հարվածային տղոց
Բրիգադը մաս,
Ու կծկեցի նորից
Բազուկներս ջրուս,
Վոր պատվերը պետի
Պատվով իրագործեմ—
—Լինել տոկուն մարտիկ,
Թե ռազմադաշտում
Յեվ թե գործարանում:

ԵԼԵԿՏՐՈ-ԶԱՎՈՐ

(ՌՈՍՏՈՎԻ ՀԱՅԻ ԶԱՎՈՐԻՆ)

Ա. ԱՎԵՏԻՔՅԱՆ

Արագադարձ փոկեր, շոինդ ու համերգ,
Հզորագոր մոտոր, ելեկտրական դու սիրտ,
Ել յես ինչպես լռեմ ձեր շոինդում ութմ,
Յեվ Հյերգեմ շանթող ու բիրտ:

Ո՛հ, զավոդ իմ հացի...
Ոհ հզոր լաբացանց յերկաթյա գոտի,
Ինչ լավ ե ձեր ուժը հեվք տալիս գործին,
Վոր գրկել ե շունչը մեր մեծ զավոդի:

Ու ամեն մի ձեռք, ամեն մի անիվ
Կարծես մոտոռի ուժովն ե դառնում,
Ալյուրը հոսում, խմորը շաղվում,
Դնդերը շարվում, յեփում ու թափվում:

Յեվ վորքան նոր հույզ վառվեց իմ սրտում,
Ոհ, զավոդ իմ հացի...
Հզորագոր մոտոր ելեկտրական դու սիրտ,
Ել յես ինչպես լռեմ ու Հյերգեմ բարձր,
Ձեր հնարքը հուզիչ ու ձեր գովքը քաղցր:

ՅԵՐԳ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ, ԴԱԶԳՅԱՀԻ ՈՒ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

ՀՈՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

1.

Առաւիոտ ե՛
Ու ժպտում են արեւի պես
Զվարդ դեմքեր
Ժիր ու ջահել:
Ու յերգում են դադգահները
Խնչպես յես համերգ
Յեւ ըյուր ձեռքեր
Զլուա ու ժիր,
Բոլշեւիկյան տեմպ են առել:

2.

Եխ՝ վարպետ ջան,
Մի տես, նայիր սիրած յարիս
Բոյը չինար:
Են դադգյահի հեվքը գրկած,
Վոնց ե շարժում
Զեռքերը ժիր:

3.

Եխ՝ Լուսիչկա,
Սրտիս կտոր,
Կյանքի անդին
Չահել ըեկեր,
Տես ինչ լավ ե
Դործն ետրվա
Ու քեզ սիրող
Տղեն ջահել:

4.

— Յես սեր ունեմ,
Ու հրե սիրտ,
Իմ այս կերտող
Մաշինի պես,
Հարվածային
Նոր թափ ունեմ,
Բոլշեւիկյան
Նոր տեմպի պես:

5.

Զեռք տուր, ընկեր,
Կերտենք մեկ տեղ,
Ու սոցմրցման
Յեւնող թափով
Աշխատանքը
Կռենք մեկտեղ:

6.

Ե՛խ, վարպետ ջան,
Մի դես նայիր, սիրած յարիս
Բոյը չինար,
Են դադգյահի հեվքը գրկած
Վոնց ե շարժում
Զեռքերը ժիր:

ՍԻՐՈՒՄ ԵՄ ՅԵՍ

Խ. ԴԱՐՈՒՐԻ

Սիրում եմ յես գործարանում աշխատել,
Դազգյահի մոտ մուրճերովս հարվածել:
Սիրում եմ յես, վոր իմ յերգը վեթխարի
Ձուլվի ըմբոստ յերգ ու կանչին մաշինի:

Սիրում եմ յես աշխատանքը բանվորի,
Ծնվել եմ յես աշխատանքում այն բոսոր,
Յերգվել եմ յես լինել մարտիկ նոր որերի,
Նորակառույց կարմիր կյանքի մի զինվոր:

Շառաչում են դազգյահները,
Վորոտում են ամեն որ,
Տրակտորները ստեպներում
Յերգ են յերգում յերկաթե:

Բազմանում են գործարաններ,
Նոր տիտաններ կառուցվում,
Ու մեր ճամբան թեկուզ փշոտ,
Պողպատներով ենք մայթում:

ԱՅՍՈՐ ՆՈՐԻՑ

Խ. ԴԱՐՈՒՐԻ

Վերջացան մեր հանգստյան որերը,
Ինչքան տոկուն եմ զգում ինձ այսօր.
Յեկան նորից աշխատանքի որերը—
Ինչքան ուրախ, զվարթ եմ այսօր:

Այսօր նորից յես գնացի գործարան,
Ուրախ, յեռուն, հարվածային, վառ թափով.
Բորբ սրտումս հուզումներ կան անհամբեր—
Յերբ պիտ լինեմ դազգյահիս մոտ լուսաբեր:

Նորից, նորից հարվածային ընկերներ—
Նորից դեմքեր բոսորավառ ու հստակ,
Նորից դազգյահ—բանվորական մեքենա,
Նորից հզոր աշխատանքի վեհ բանակ:

Նորից գործեր, զավոդի վեհ առույց,
Նորից ժողով, գեկուցումներ զանազան,
Նորից դեմքեր յերիտասարդ, վառվռուն,
Նորից դազգյահ, աշխատանքներ բազմազան:

Ի՞նչ լավ ե միշտ գործարանում աշխատել,
Հաղթանակի համար անվերջ մարտնչել,
Աշխատանքի բյուր բանակին մասնակցել,
Նորակառույց կյանքի համար պայքարել:

ԼԵՆ-ԶԱՎՈՐԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Խ. ԴԱՐՈՒՐԻ

Ударники паровоза--с борного цеха
Лензавода т. т. Горфман, Смирнов
и Дарбинян вступили в партию.
(«Молот» 9 авг. 31 г.)

Այսօր տեսա յես «Մոլոտով» ձեր դեմքերը վառ,
Լենգավողի արիակամ հարվածային բանվորներ,
Արդֆինալանը Լենգավողի կիրառողներ լավագույն,
Նոր կյանք կերտող՝ հաղթաբազուկ և շինարար:

Բոլշևիկյան կուսակցության մեջ եք մտել դուք այսօր,
Ել ավելի պայքարելու սոցկառուցման ֆրոնտում,
Մեր լույս յերկրի ենտուղիաստներ ջահել, ջիվան ու հզոր,
Ել ավելի վեր պահելու Լենգրոշը վառվռուն:

Լենգավողի բոլշևիկներ, սեզ, առնական ու անահ,
Մեր յերկրի վես կառուցման վորմադիրներ,
Աշխատում եք վառ, ջերմեռանդ, չեք կորցնում վոշ մի պահ.
Ձան ու ջիվան, վեհ, հաղթական ենտուղիաստներ աննկուն:

Առավոտյան, յերը հնչում ե ղչակը զիլ ու անուշ,
Խանդավառ դուք, արթնանում եք, ապա գործի շտապում,
Չավոդ գնում կայտառ, ուրախ, դադդյահներիդ մոտ կանգնում,
Հուժկու տեմպով, հարվածային գործերդ նորից սկսում:

ՍԵԼՄԱՇՅԱՆ ՑԻԿԼ

ԱՐՄԵՆԱԿ ԽԱԶԵՆՑ

Բետոնակուռ
Կոները ձեր
Հախուռն շարքերով,
Դեմքերը ձեր՝
Հրդեհի պես հրաշեկ.
Աշխատանքի մարտերով,
Դուք սելմաշյան
Ընկերներ տոկուն—
Թավում եք քրտինք
Անդադար, անքուն:

1.

Ահա, տենչում,
Ձգտում,
Փարվում եք մեքենային
Ցեվ քաղցր հույզերով
Ունկնդրում,
Հասկանում եք
Նրա բարդ,
հրաշունչ լեզուն:

2.

Տես,
Դաշտերը յիլան
Ո՛հ, վորքան,
Վորքան
Սելմաշյան տրիյեր,
Սերմազտիչ
Ցեվ պողպատե գութանի
Բյուրաբյուր շարքեր:

Տեսնում եմ, լարված եք—

Մեծ բրիգադիրի պատգամը

Հուզել ե ձեզ:

Մեծ բրիգադիրի պատգամը

Պարզած վեր,—

Վորպես բարձր մի գրոշ

Արնավառ,

Փողփողուն

Յեվ այդ կարմրածուփ

Դրոշի ներքո

Մաքառում եք,

Լարվում եք

Ռիթմիկ յեռանդով

Մեքենայի հետ.

Ճգնում եք

Սիրել,

Տիրել նրան,

Վարել դեպի

Նորանոր մարտեր,

Դիրքեր,

Խրամատներ հաղար,—

Փշրելով բյուր

Պատնեշ ու թմբեր:

4.

Ծանր տարիներն անցել են...

Վրոնում ե դրսում,

Յերկրի ներսում

Դեղին, անատամ

գայլերի վոհմակը:

Յերկաթը խուժում ե,—

Տոն տվեք,

Թե՛վ տվեք,

Թող հյուզերը բերկրան

Հնգամյակի վիթխարի շողով,

Թող վառվեն գյուղերը՝

Հիզրո լույսով լողան:

Լեռներ,

Կրկին լեռներ յերկնամբարձ,

Յեվ դու, պոետ, ահա Լոռին,

Դեբեղը գոռ ու ամենի

Արշավում ե վայրի խինդով,

Փրփրաբաշ ու կատաղի,

Յեվ մուրճերի դոռ թնդյունը

Հաղթական ու վիթխարի

Լեռան սիրտը յերբ չեք քանդել,

Ու մարդկային ուժը հորձան

Սարերն այն դեռ չեք բանդել,

Ուր աղաթները բուժ, հնորյա

Մարդկանց վերելքը կաշկանդել.

Ուր պոետ մի հառաչանքով

Յերգն ե յերգել դառնաթախիժ

Ու անցել ե Սարոն իր հետ,

Անուշն ե կանչել լի սորմոքով,

Ուր Սարոն իր վոչխարի հետ

Դարձած պատրանք՝ Անուշի դեմ:

Յերբ կամքերը բուժ ու հոռի—

Բանդե են սրտերը՝ նրանց սիրող

Դարձած իրար գերի, տոչոր

Արտասվե են լի լ՝ անուով:

Ձայնակցելով նրանց կանչին,

Հառաչել ե Դեբեղն անզուսպ,

Տխուր յերգել մի ելեգիա

Յեվ հյուսել յերգեր ու մեղեդի:

Փնչում, հեվում

Ու վաղում ե

Շոգեգնացքը սրընթաց:

Այսօր, պոետ, այլ եւ Լոռին,
Հրդեհվել եւ սիրտը նրա,
Դողում եւ հսկա թափից մի նոր,
Յերկաթն եւ դոփում նրա կրծքին:
Դղիւղ, վորոտ
Ու աղմուկ,
Զարկելով գոռ
Ու հատու
Քանդում,
Ահա բանդում են
Լեռը,
Ահա կրկին վորոտաց
Դինամը հաղթ:

Զորագետն ե...
Մըռռում ե
Լեռը,
Ժայռը,
Դիժ Դերեղը
Դեռ կոծում
Ու վշտում ե կատաղի:

Յեւ կուռ,
Ամուր
Զեռքերով բյուր
Շանթարգել են կորովի
Թափն անդուստ, մոլեգին
Լեռների դեմ վիթխարի:

Ու հարավի արևի տակ
Քանդում են,
Զարկում
Ու քրտնում:

Ո՛հ ընկեր իմ,
Զեր շունչը
Ու կամքն անդուլ՝
Դարձնում ե Լոռին այսօր
Յերկաթաթով

Ու ելեկտրոհեղք.
Յերկաթավոր յերկերն իմ
Դառնում ե արագ, լուսաթով...
Ոհ, այլ ե, այլ ե Լոռին՝
Բռնել ե ուղի մի յերկար ուղիով:

Դղիւղ, վորոտ
Ու աղմուկ. լեռը տնքում,
Լեռը հեծում
Ու փշրվում ե:

Դիժ Դերեղը վայրի, անսանձ
Շրջադարձ կատարեց
Ու մաավ ելեկտրոհունը:

Միկոյանի անվան գործարանին,
առխառանքին ու քափին նրա,

Ահա և ժխորում այս հզոր,
Հոնդյունով մի վիթխարաթափ
Մեքենաներն անդուլ ու գոռ
Դառնում են թափով մի անափ:

Ձգում են, վոր անհուն յեռանդի՝
Անհողողոյ այդ կուռ գերանդին
Թափով մի անդուսպ գալարվում է,
Մերթ գլորում է ուժով տենդագին
Ու շոնդացող փայլն իր փոռում է:

Յեվ մաքառող դեմքերն այն կորովի
Այնքան պարզ, հասարակ ու անվիշտ
Վարում են՝ մեքենան գոռ ու վիթխարի
Դեպի արեվշող գալիքը բազմախինդ:

Ու նրանք ձուլված՝ մեկը մասն է մյուսի,
Վարում են այս բարդ—բարդ մեքենան—
Բազուկներում դույզ՝ անդուլ մի կամք ունի,
Այդ բանվոր մարդն է՝ բանուկ ու տխտան:

Հսկա ու բարդ կուռ մեքենաների՝
Գոռ շոինդն ու փայլը յերկաթե.—
Ահա այս ծանր, դժվարին յերթում
Դժվում է ուղի մի պարզ, պողպատե:

Անհուն հույզերի այս վառ ժխորում,
Յերկաթ կարոտով անսանձ, կորովի
Առորյան ահա արեվ է շողում
Կոշտ ձեռքերով այդ կուռ բանվորի:

Հատու յերգերն իմ և հունչը վորոտան
Ձուլված է հանուր նոր կյանքի թափով.
Շաչուն դղիրդով թռչում է առորյան
Դեպի միակ յերգը մի նոր իմաստով:

Իրար հետ ձգված բյուրաբյուր խոհերով
Մարդը՝ մեքենան վարում է դեպի յեկքը.
Կյանքն այս արեվշող հրե թափ անխիղճ
Յեղնում է վոսկեվառ թով վերելքը:

Ձուլված է յերդս հնչուն լարերով,
Յեվ ահա շնչում են շաչող այդ հունչը,
Մարդն ու մեքենան ութմիկ յեռանդով
Վարում են գործն այս դեպի վերելքը:

1.

Շատ ձի յե անցել,
Բյուր սայլեր ճրոռան,
Ուղտերի քարվան —
Կտրել այդ ճամբան:
Հանգիստ եր ուղին,
Յերբ սայլն եր ճռռում,
Յերբ ծանր ու դանդաղ
Յեզն եր վորոճում

2.

Ճչաց ավտոն սուր ճիչով ու սրընթաց
Անցավ հողմի պես թափով ամենի,
Իսկ ճամբան դողաց, սրթսրթաց,
Ձգաց ալիքը՝ հուժկու, վիթխարի:

Ձկարծես թե հին սայլն ե ճռռռան,
Ու սայլորդը, ծուլ հորանջը դնչին.
Յերկաթե թափն ե հուժկու, հուրհրան,
Այդ յեղնող ուժն ե նոր ու վիթխարի:

— Ձգիր պարանը, թող պերկ լինի,
— Տուր վերջին դալպը մահացու,
— Թող դողդողա ժայռն ամենի,
— Նոր շախտաներ ենք բանալու:

Յոթ որ անցավ այն վեճ ժամից,
Յերբ առաջին դարկը թնդաց.
— Տվեք, տղերք, ինչ շուտ սահեց,
— Մոտ ե ժամը գրկախառնման:

Ձորաձիգ ե շարքը ետը,
Ետը կյանքը՝ խնդուն արև,
Մոտ ե ժամը՝ վոր պատահենք
Յեվ տանք իրար վողջույն, բարև:

Վորոտացին մուրճերը ծանր,
Բյուր զարկերից հրահորձան,
Ու թափվեցին ժայռերը ցածր,
Հարվածը ծանր եր, մահալործան:

Յերկու կողմից հորդ ու խնդուն
Հանդիպեցին տղերքն՝ իրար.
Գրկախառնում, սեր ու համբույր,
Ո՛հ, վեճ ե ժամը հանդիպման:

Ծիծաղկոտ վիշկաներ անհամար,
Անաստան, աներեր ու կանգուն,
Ուղղել են զլուխներն իրենց հար
Մշուշոտ ու մռայլ կապույտում:

Նավթաբույր պարտիզում այդ ջերմոտ
Զկան ալ ծաղիկներ ու վարդեր,
Միայն հաղթ վիշկաներն են տենդոտ
Արձակում աղաղակ ու ճիչեր:

Հիշում եմ, քաղաքում սևաթույր
Իմ հայրը հասարակ մի բանվոր,
Մայիսին, յերբ ցույցի յեր գնում,
Ընկավ նա արնաքամ, վիրավոր:

Այդ դեպքից տարիներ են սահել,
Խորտակվել ե կարգը բռնակալ,
Ու կարմիր աշխարհում մեր արդեն
Փթթում ե սերունդ մի առնական:

Աճում ե սերունդ մի աներեր,
Փայլում ե սերունդն այդ ու դյուլթում
Ծնվում են դեռ նորեր ու նորեր,
Ծաղկում են վարդի պես, փթթում:

Ծփում ե փրփրուն ծովի պես,
Կռվում ե կենցաղը նորածին,
Վեր վաղը հաղթական, ժպտերես
Ամենուր թևերն իր տարածի:

Սիրում եմ պայքարն այդ տենդային,
Սերունդն այդ յեռանդուն աշխատող,
Կարմիր մեր աշխարհում խորհրդային
Նրան ե ապագան լուսաշող:

Հնչում ե շեփորը, կանչում ե,
Լսում ես, լսում ես Կիմա,
Շաչում են որերը, թռչում են,
Շաչում ու թռչում են հիմա:

Արտերը դեղնել են, շիկնել են,
Յերգում են աշխատանք ու սեր,
Լսում ես նրանց շշուկները,
Յերկիր իմ, մանուկ իմ լուսե:

Յերկաթե այս դարը շատ բարդ ե,
Այս դարը, վոր յես եմ ապրում,
Պայքար ե ամեն ակնթարթը,
Պայքար ե ամեն մի ապրում:

Իսկ յես իմ հույզերը, հույսերը
Կապել եմ դաշտիդ ու հանքիդ,
Յերկիր իմ, քո սերը իմ սերն ե,
Յերկիր իմ, մանուկ իմ անդին:

Հնչում ե շեփորը, կանչում ե,
Լսում ես, լսում ես Կիմա:
Շաչում են որերը, թռչում են,
Շաչում ու թռչում են հիմա:

Դու բացվում ես հիմա իմ դիմաց,
Կարկաչում ես փորպես մի կանաչ,
Քեզ շողում ե մի նոր լուսաբաց:
Ախ, ինչ լավ ե քեզ պես մանկանալ:

Առավոտն ե փոքիլ քո առաջ
Իր բույրերը վառման ու վարդե,
Դու աղջիկ, դու խնդուն մի կարկաչ,
Սրտում քո հուր գարուն ե արդեն:

Թող դառնան ձեռները քո տոկուն,
Աչքերը քո լազուր ու փայլող.
Միշտ բազմի մանկական քո հոգում
Գարունն այս հրահուր, արևող:

Այս լուսե որերում իմ յերկրի,
Յերբ գործում ե ամեն մի մկան,
Թող հոգին քո խինդով միշտ բերկրի
Ու զգա իմ կարմիր լիբիկան:

Դու հիմա դեռ խաղում ես այնպես,
Ու նման ես փոքրիկ աղջկա,
Աչքերում քո նստել ե կարծես
Մեղմուժյուն մի լուսե ու պարզկա:

Յերբ հետո մեծանաս դու արդեն
Ու ոգնես քո յերկրին միշտ աճող,
Աշխատիր ու գործիր ժպտադեմ,
Աղբյուրի պես կապույտ կարկաչով:

Դու աղջիկ, դու փոքրիկ ու խոսուն,
Լուսավառ խնդուժյամբ միշտ արբած,
Քո դիմաց կանաչներ են հոսում
Ու յերկրին ե աճում սրտաբաց:

1.

Խոսքերը հորդում են, հորդում ջրի պես,
Խարույկը վառվում, բոցեր արձակում.
Կոմանդիրը վեհ հայացքը սրի պես,
Իսկ զինվորները լսում են, հուզվում...:

«Սա վոչ պատրանք ե, վոչ խաբեություն,
Տասնյոթ թվի պատկերն ե անհղ,
Չորս կողմը լքում, դավաճանություն,
Բոլորիկն անկանգ կռվում ե անվախ»:

«Մրբիկ եր անհղ ու թարթար կարծես,
Վորպես մի բազե ճախրում ենք դեպ վեր,
Ու կյանքը մեր բոլոր աչքեր սրատես,
Ու մենք գործում ենք կռվում աներեր...»

Վորքան հերոսներ ընկան քաջաբար,
Ու յես հիշում եմ նրանց դեմքերը վառ,
Կյանքը խելառ եր, ուրբը պայծար
Յեվ հաղթանակը պարզեցինք հրավառ:

Խոսքերը հորդում են, հորդում ջրի պես,
Խարույկը վառվում ե, բոցեր արձակում,
Կոմանդիրը վեհ հայացքը սրի պես,
Իսկ մարտիկները լսում են, հուզվում...:

2.

Նորից բանակում կռվի դաշտի մեջ,
Գնդակներ վզում, մահ են սպառնում,
29-ը թիվն եր այդ ուրերն աղջամուղջ
Կարմիր բանակը կռվում ե, կռվում...:

Թողում ե նալը և ողը պատում
Յեվ ուսմբերը չորս դին արձակում,
Ահա մի մարտիկ ընկնում ե մեռնում
Ու գոչում անվախ՝ կեցցե Կոմունան...

Մարտիկներն առույգ վազում են առաջ,
Այն ինչ գնդակը մահ ե սպառնում,
Առաջ, դիրքերը և վոչ մի նահանջ,
Կարմիր բանակն ե առաջ արշավում...

3.

Գալիքի ծոցում այս մեծ պայքարում,
Պահակի նման հսկում ե արթուն:
Կոփվում են սրտեր մեր կյանքի բովում,
Կապիտալն իզուր դավեր ե լարում...

.
.

...Սոսքերը հորդում են, հորդում ջրի պես,
Կարմիր բանակն արթուն ե հսկում.
Կոմանդիրը վեհ, հայացքը սրի պես
Յեվ մարտիկները պատրաստ են զոհում:

ՎՈՂՋՈՒՅՆ ՄԱՅԻՍԻՆ

Մ. ԹՈՂԹԱՄԻՇՅԱՆ

Կառուցման դիրքում, հաղթական յերթով
Դիմավորելով քեզ, մարտական մայիս,
Բյուրերի շարքից, բյուրերի ձայնով
Քո վեհ գալստին վողջույն եմ տալիս:

Վորքան ազդու յես քո թափով հզոր,
Հեղափոխության դու փարոս անմար,
Վորքան մասսաներ գրկում ես այսօր՝
Գալիք որերի պայքարի համար:

=====

(Նվեր Հոկտեմբերի նահապետական բանավորներին)

Հողնած, կռացած իր բեռան տակին,
Բլրտինքը պատած սեպած ճակտին,
Բաղցած ու մաշված ամբողջ իր կյանքին,
Գործեց, ծառայեց հայրս ուրիշին:

Վաղ առավոտյան լուսաշող ծեղին,
Մինչ յերեկոյան ուշ գիշերներին
Գնում եր շտապ մրոտ գործարան,
Վոր վորդերն յուր քաղցած չման:

Յերեք չեմ տեսել հորս ցերեկով,
Նստած մեր կողքին անուշ ժպիտով,
Նա միշտ մոռյալ ու թաղծոտ դեմքով,
Մտնում եր մահի՞ն խռոված հողով:

Փոքրիկ իմ քույրը տիֆից մահացավ,
Յերկու յեղբորս ծաղիկը տալավ,
Յերեքին մի-մի արկղիկ շինեցինք,
Կաթիլ արցունքով հողին հանձնեցինք:

Յեկավ Հոկտեմբեր՝ աշխարհը թնդաց,
Հրացանն ուսին հայրս ել գնաց,
Մարդկային արյունը հոսեց վոնց հեղեղ,
Առանց վտառների հայրս տուն ընկավ:

Առաջին անգամ ուրախ ժպիտով,
Սեղմեց ինձ կրծքին հայրս համբուլով,
«Կեցցե Հոկտեմբեր» գոչեց նա ուժգին՝
Յեվ անդոր, անշունչ փովեց հատակին:

Անցել են որեր, Հոկտեմբերներ շատ,
Բայց դեռ այրում ե համբուլքն այտերս,
Հիշում եմ հորս—և խինդն այրունոտ
Յեվ հաղթանակի դրոշմ հրոտ:

Ինչո՞ւ յեն սուլում, հուզիչ հեկեկում,
Բյուր գործարաններ ինչո՞ւ յեն վողբում,
Շողեկառք, դնացք, նավ ու առագաստ,
Կես ճանապարհին կանգ առան հանկարծ:

Ինչո՞ւ յեն մարդիկ վողջ համր դռներ,
Խղճուկ վորբի պես շշմել մնացել.
Ամենքի աչքից արցունք ե կաթում,
Գող-գող շուրթերը իրար են կպչում:

Ի՞նչ, մեռել ե, յե՞րբ... ո՞վ ասաց այդ ձեզ,
Սուտ ե, Լենին՞ը... չեմ հավատում յես,
Այդ ի՞նչպես մեռավ այն հերոս հսկան,
Մեծ ղեկավարը հեղափոխության:

Վոչ, նա չի մեռել, իզուր եք սգում,
Նա ապրում ե մեզ հետ, ամենիս սրտում,
Լսո՞ւմ եք նրա գոչը հաղթական,
«Մերն ե աշխարհի փայլուն ապագան»:

Գործարան, տրակտոր, բանվոր, գյուղացի,
Անթիվ մարտիկներ սև աշխատանքի,
Կռում են, ծեծում, նոր կյանք ստեղծում,
Վլադիմիր Իլյիչի խոսքը կատարում:

Վոսկեզոծ իմ արտում
Ալ վարդեր են ծաղկում.
Քաղում եմ հասկերը,
Նոր կյանքի յերգ ասում:

Ալ արեվն ե կիզում,—
Յեա խուրձեր եմ դիզում,
Աշխատում եմ անհոգ,
Կոխողի յերգն իմ սրտում:

Այնտեղ, ուր մթին ժայռերը մռայլ
Կանգնել են խոժոռ, հաղթ ու անայլայլ,
Այնտեղ, ուր ծերուկ Դերեղը վարար
Ափերն ե ծեծում զարկով միալար.—

Այնտեղ, ուր կանաչ լեռները Լոռու
Իրար դեմ առ դեմ, աղմկից հեռու,
Կանգնել են գոռոզ ու նայում անհուն,
Կապույտ հեռուներ—մոլորված, անքուն,—

Այնտեղ շինվում մի հիդրո-կայան,—
Գուգարաց յերկրի աչքը-հուրհրան,
Այնտեղ շինվում ե Ջորադեա հսկան,
Հաղար, բյուր հազար աչքով ելեկտրյան...

Ժայռերը վիթխար ու սեպի նման
Ցցվել են դեպի յերկինք անսահման,
Նրանց մաշելով հազար վաշ-վուշով,
Դերեղն ե հոսում իր անցած հուշով:

Այն ձորի միջին, այն գետի ափին,
Ուր ալիքների միալար ծափին
Ականջ ե դրել Գուգարաց յերկրի
Սերունդը՝ տխուր,—անցած որերի,—

Այն խոր ձորի մեջ բազմում ե հպարտ
Ջորադեաը վեհ, խրոխտ ու անպարտ,
Բազմում ե հպարտ... ու լույս պիտ փոխ
Այն չքնաղ Լոռում—արգավանդ, բերրի...

Պիտի վոռոգի ելեքարո-լույսով,
Իր եներգիայի անսպառ ու յժով
Հազար հոգ ու բաղ, անմշակ դաշտեր
Ու ելի հազար սպասող վայրեր...

Մի՛շտ պիտի վառվեն բյուր հազար լույսեր
Հազար գյուղերի հազար խրճիթում:
Մի՛շտ պիտի ծաղկեն բյուր հազար հույսեր
Ամեն հարկի տակ, ամեն խրճիթում...

Պղնձահանքը սուլիչով խիղախ
Պիտի կանչե հզո՛ր դարթնող գյուղերին...
— Լոռին կշարժվի, վոնց բանակ ուրախ
Ու վերջ չի լինի նրա յերգերին...

Հազար ու հազար ու բյուր գնացքներ
Այն ձորի միջով սուլելով կանցնեն,—
Ամեն կողմերից գեղուկ, բանվորներ
Լցված խնդու-թյամբ՝ գործերին կանցնեն:

Լույսերի մի ցա՛նց լեռնոտ աշխարհում.
Ամեն անկյունում մի աչք կլինի.
Ժպի՛տ ու ծիծաղ բոլոր սրտերում,
Բոլոր յերգերում Զորագետ կասվի՛...

...Այնտեղ շինվում ե մի հիդրո-կայան,
Գուգարաց յերկրի աչքը-հուրհրան.
Այնտեղ շինվում ե Զորագետ հսկան—
Հազա՛ր, բյուր հազար աչքով ելեկարյան...

„ԿԱՎԿԱԶՍԿԻ“

ԳԻԺՈՅԱՆ

Մեր գրասենյակի ճակատին գրված է՝
„Контора прораба 2-го
участка тракторстроя“,

Հրապարակի մեծ դանդը հնչեց տասնյերկու անգամ: Նրա ղողան-
ջներն ողն անցնելով՝ խցկվեցին մեր ականջները:

Աշխատանքն սկսվեց:

Մեր արտելի անդամները հավաքվեցին: Վերցնելով ամեն մեկս
յերկաթե նիզ, բահ, լապտի, ձեռնոց՝ աշխատանքի անցանք: Դա 16-րդ՝
չորս հարկանի շենքի տեղն էր, վորի համար Ֆունդամենտ եյին փո-
րում: Այդ և բոլոր կառուցված ու նոր կառուցվող շենքերը, վորոնց
թիվը մեր շրջանում 30-ի պիտի հասներ, շինվում եյին Տրակտորստրո-
յի բանվորների համար:

Յերկրորդ օրն էր, վոր աշխատում եյինք: Մեր արտելը բաղկա-
ցած էր 12 հոգուց, վորի ղեկավարն էր Մալյուտինը: Մենք աշխա-
տում եյինք զույգ-զույգ: Մալյուտինը նույնպես աշխատում էր: Յու-
րաքանչյուր զույգին արվում էր վորոշ հողամաս. այդ զույգերը մըր-
ցում եյին իրար հետ: Զույգից մեկը նիզով, իսկ յեթե փափուկ էր՝
բահով փորում էր հողը, իսկ մյուսը շախալորկայով լցնում էր տաչ-
կան և դուրս տանում: Այսպես փորում եյինք փոխն ի փոխ: Բայց
վորովհետեւ սաստիկ շոգ էր, և հուլիսյան արևի ճառագայթներից առա-
ջացած քրտինքը մարդու շորերն այնպես էր թրջում, վոր չէր լինում
շարժվել և քրտինքից սկսում էր մեջքը մրմուռ, ուստի հանում եյինք
շապիկներս և այդպես աշխատում:

Այդպես աշխատելը լավ ե: Դրտինքը հանգարտությամբ կսահի
ներքե, իսկ արևը վերից կայրի ու կայրի... մարմինդ կձկունանա, իսկ
կաշին սկզբում կկարմրի, կսևանա և կամրանա: Ծիշտ ե, սկզբում մեջքդ
մի քիչ կցավի, բայց դա վոչինչ, շուտով կանցնի:

Մեզ հետ էր աշխատում և Կավկազսկին, վորի անուն-ազգանունը
դժվար էր արտասանվում, բայց վորովհետեւ նա կովկասցի յեր, դրա
համար ել նրան կանչում եյին «Կավկազսկի»:

Ամենքը սիրում եյին նրան: Նա ուռսերեն քիչ գիտեր, ավելի
ճիշտ՝ գիտեր, բայց ճիշտ արտասանել բառերը չէր կարողանում, և
նրա արտահայտության մեջ կար մի տեսակ ուրախ հետաքրքրու-

թյուն: Ամենքն ուզում եյին խոսեցնել նրան, կամ վորեւ եւ բան պատմել տալ իր կյանքից:

Նա, վորպէս կովկասցի՝ աչքի յեր ընկնում իր յերեսի դիմագծերով, սեւ մազերով եւ յուրահատուկ սեւ դեմքով:

Նա Կաշուրինի հետ եր աշխատում, մի գուլգ. եյին: Կաշուրինը մի ջահել, ուրախ տղա յեր, շեկ դեմքով, շեկ մազերով, աչքերը՝ կապույտ, քիթը՝ կարծ: Կաշուրինը առանձին խնամքով եր վերաբերվում իր ընկերոջ եւ հպարտանում եր նրանով, վոր նրա մտերիմ ընկերն ե, համարյա ուսուցիչը:

Մենք բավականին փորել եյինք, մոտ մի մարդաբոյ, յերբ նստեցինք ծխելու:

— Կավկազսկի, ո՞ւմն ես նայում,— դիմեց Կաշուրինը նրան, վոր նայում եր հեռվից անցնող մի բանվորուհու:

— Մարուսյային,— պատասխանեց Կավկազսկին:

— Ի՞նչ ե, Մարուսյան դո՞ւրդ. ե գալիս:

— Այո՛, դուրս ե գալիս:

— Իսկ դու ենտեղ Մարուսյա ունե՞ս:

— Ունեմ:

— Լա՞վն ե քո Մարուսյան: Ի՞նչ կլինի, պատմիր նրա մասին,

Կավկազսկի, պատմի՛ր:

— Շատ լա՞վն ե իմ Մարուսյան,— սկսեց նա,— բարձրահասակ, ուղիղ ինձ չափ ե, կարմիր թշերով, յերկար, սեւ մազերով, վոր յերբեմն հյուսում ե կախում ե մինչև փեշերը ե յերբեմն հավաքում ե գլխարկի տակ՝ նմանվելով տղայի:

Թեեւ նա վոչ մի «Մարուսյա» չունեւ, այնուամենայնիւ սկսեց այնպէս պատմել, վոր բոլորը հետաքրքրվեցին:

— Քո Մարուսյան քեզ շատ ե սիրում,— հարցրեց առաջինը.

— Հիմա ուրիշին գնացած կլինի,— ասաց մեկ ուրիշը:

— Չե՛, Մարուսյան եղպիսի բան չի անի— նա ինձ շատ ե սիրում, հիմա նա ինձ ե սպասում: Յերեկ նամակ ստացա, գրել եր, թե շատ ե կարոտեւ:

— Յեթե ուրիշին գնա, դու դաշուխով կսպանես նրան, չե՞, Կավկազսկի:

— Չե՛, ինչո՞ւ պիտի սպանեմ, նախ՝ նա ուրիշին չի գնա, իսկ յեթե գնա, յես ել ուրիշին կառնեմ. ես առաջներում եր, վոր դաշուխով եյին վրեժ առնում, այժմ չեն սպանում:

— Այստեղից մի Մարուսյա առ քեզ համար, մեր Մարուսյաները լա՞վն են:

— Քո Մարուսյան տուր ինձ,— ասաց Մալյուտինը ծիծաղելով, — կտա՞ս, Կավկազսկի, յես ել իմը քեզ կ'տամ:

— Կտամ, յեթե նա քեզ համի:

— Կհաջի, դե՛, տուր ձեռքդ:

Կավկազսկին ե Մալյուտինը ձեռք-քեռքի տվեցին: Տղերքը ծիծաղեցին:

Մալյուտինը արտելի ավագը լինելով, իրեն մյուսներեց բարձր չեր պահում: Նրա կապույտ աչքերի ե ժպտացող դեմքի արտահայտության մեջ մի տեսակ դրավձուլթյուն ե ընկերականություն կար: Ներանից չեյինք քաշվում: Նա ե լավ աշխատում եր աշխատանքի ժամանակ ե լավ կատակ անում՝ հանդստին:

Մեզնից այն կողմն աշխատում եր կանանց արտելը: Նրանք վազոնետկաներով ավագ եյին տանում հարևան շենքի մոտ:

— Սկսենք, տղերք,— ասաց Մալյուտինը ե վեր կացավ. մենք՝ նույնպէս: Աշխատանքը վերսկսվեց: Տաշկաները սկսեցին գլլալով գնալ— դալ, նիզերը սկսեցին փորել՝ ելի արեւն այրեց, ելի քրտինքը ռահեց:

Այդ ժամանակ կանանց արտելից մեկ կին, ջրով լիքը դուլով, անցնում եր մեր մոտից: Կաշուրինը սկսեց խնդրել, չհամարյա աղաչել.

— Կավկազսկի, Մարուսյան... Կավկազսկի... մի բան ասա, ինչ կլինի, ձեր լեզվով մի բան ասա նրան...

Կարծես մի տեսակ սովորություն եր դառել, յերբ մի աղջիկ, կամ, ինչպէս ասում եյին, մի «Մարուսյա» յեր անցնում, տղաները սկսում եյին կանչել, մի բան ասել, կամ մի սրախոսություն անել, հենց թեկուզ ծիծաղելու համար: Դրանից բոլորովին չեյին նեղանում բանվորուհիները, ընդհակառակը, հետ դառնում մի այնպիսի սրախոսություն անում, վոր տղաները կորցնում եյին իրենց, այնպէս վոր զա արտասովոր բան չեր:

Այդ բանը սովորել եր նաեւ Կավկազսկին:

— Եյ, Մարուսյա, մի պաչ տա՛ս:

— ԿТО?— ասաց «Մարուսյան» չհասկանալով:

Տղերքը սկսեցին փխփխալ:

— Սրի՛ մեզ մոտ աշխատիր,— կրկնեց Կավկազսկին:

— Чего он говорит, не понимаю?

— Քեզ հայհոյում ե,— ասաց Կաշուրինը ծիծաղելով:

— Իսկ նա վո՞րտեղացի յե:

— Կովկասցի:

— Բոսներեն չգիտի՞:

— Չե, քիչ գիտի:

— Իսկ ի՞նչ ե ուզում:

— Քեզ ե ուզում, քեզ,— ասաց տղաներից մեկը, ե բոլորը ծիծաղեցին:

— Յես նրա չափ աղջիկ ունեմ:

— Հենց աղջկանդ մասին եր խոսում:

«Մարուսյան» մոտեցավ նրան, հետաքրքրությամբ դիտելով:

— Ты кавказский? — հարցրեց նա:

— Да, պատասխանեց աղան:

— А что тебе надо, воды хочешь? — ասաց «Մարուսյան, դույ-

լը ցույց տալով:

— Давай, — ասաց Կավկազսկին ու ջրից խմեց:

— Хорошо? Ժպտաց «Մարուսյան»:

— Хорошо, շնորհակալ եմ, — ասաց Կավկազսկին ու նույնպես

ժպտաց:

«Մարուսյան» գնաց: Նա տեղ հասնելով, ըստ յերեւոյթին, պատմեց իր ընկերներին. նրանք դեպի մեղ նայեցին ձեռքերի զանազան շարժումներով:

Մենք և մյուս բոլոր հողափորներն աշխատում էինք դործարքով: Յուրաքանչյուր խորանարդ մետրին, յեթե փորվում եր բահով, ստանում էինք 80 կոպեկ, իսկ նիզով փորելու դեպքում՝ մի ուրելի: Յուրաքանչյուրը մոտավորապես փորում եր որեկան 5—6 խ. մետր, իհարկե դա կախված եր արտելի անդամների աշխատունակութունից. լավ աշխատանք կատարող արտելը շատ ել փող եր ստանում: Արտել կար, վորի անդամներին ընկնում եր 120—130 ռ. ամսական:

— Закурим, ребята, լավեց մի ձայն:

— Закурим, ձայնակցեցին մյուսները:

Կրկին նստեցինք: Կեսօրվա մոտ եր: Ինչպես աշխատանքի, այնպես ել հանգստի ժամերն ուրախ էին անցնում. այս անգամ առավել ես:

Կաշուրինն ու Կավկազսկին, ֆունդամենտի կողքին նստած, վոտքերը կախած ցած, ձմերուկ էին ուտում: Ֆունդամենտի մյուս ծայրում խմբվել էին մյուսները: Նրանց մոտեցան 2 բանվորուհի կանանց արտելից: Ինչ վոր բան ասացին տղերքին, տիբեց աշխուժութուն և ծիծաղ:

— Կավկազսկի, Կավկազսկի, արի այստեղ, քեզ կանչում են, —

լավեց մի ձայն:

Բոլորը նայեցին նրան: Կավկազսկին նայում եր տարակուսած:

— Արի, արի, — կրկնեցին մի լքանիսը:

Նա վերկացավ, ուզեց դալ, բայց կանանց տեսնելով, գնաց շորերը հագնելու:

— Հարկավոր չե, հարկավոր չե, այդպես արի, — ասացին տղաները, կարծես նրա միտքը հասկանալով: Նա յենթարկվեց:

— Ի՞նչ ե, — հարցրեց նա խմբին մոտենալով:

— Առ, ծխախոտ ծխիր, — պարզելով ասաց կլար դեմքով և շեկ ժաղերով Կրիմբելովը, վոր բոլորից փոքրն եր:

Կավկազսկին վերցրեց ծխախոտը, վառեց: Տիրեց լուռթյուն. բոլորը սպասողական դուռթյան մեջ էին:

— Այս աղջիկը դուրդ գալի՞ս ե, — ասաց աղջիկներից մեկը Կավկազսկիի թևից բռնելով և ցույց տալով մյուս աղջկան:

Աղջիկը յեկավ ու կանգնեց ուղիղ աղայի դիմաց, դեմքին տալով վեհերկոտ տեսք:

Նա հագել եր հասարակ կոշիկ, կանաչավուն դեյրան իջնում եր մինչև ծնկները: Կոֆտայի վերին կոճակներն արձակ էին, կուրծքը բաց եր, գլխին կապել եր կարմիր թաշկինակ, վորի տակից մի քանի շեկ ծոպեր թափվել էին յերեսին: Նա կանգնել եր զգաստ, դինվորականի նման՝ կուրծքը դուրս, կրունկները միացրած: Մարմինն տրվել եր վորոշ թեքություն, արևից կարմրած այտերը դեմքին տվել էին տպավորիչ արտահայտություն:

Նրան դեմ առ դեմ կանգնել եր Կավկազսկին, նա գլխաբաց եր, առանց շապիկի և վոտքերին չստեր: Սև մազերն անկանոն կերպով թափվել էին ճակատին: Գորշ դեմքի վրա յերեւում էին քրտինքի կաթիլներ: Նա հաղթանդամ, ամրակուռ մարդու տպավորություն եր թողնում:

Յերկուսի դիրքն ու դեմքի արտահայտությունն այնպես հետաքրքիր էին, վոր այնտեղ յեղողները մերթ մեկին, մերթ մյուսին էին նայում:

— Հը, լավի՞կն ե, — հարցրեց թևից բռնած աղջիկը:

— Լաջն ե, — պատասխանեց Կավկազսկին:

— Սիրո՞ւմ ես դու ինձ, — ասաց կարմիր գլխակապով աղջիկը և, ուղղելով դեմքը, նրան տվեց ավելի խրոխտ տեսք:

Մենք լուռ սպասում էինք նրա պատասխանին: Նա մի բոպե լուեց, կարծես հասկանալով դործի ելությունը և...

— Ա՛խ, յես վաղուց եմ քեզ սիրել, Կարմիր Մարուսյա... Կեղծ բացականչեց Կավկազսկին և հանկած զրկեց աղջկան: Աղջիկն իսկույն դուրս պրծավ նրա ձեռքերից:

— Эй ты, սպառնաց «Կարմիր Մարուսյան», մատը թափ տալով:

— Տեսնո՞ւմ ես ինչ չարածճին ե յեղել, իսկ մենք կարծում էինք, վոր ամաչկոտ կլինի, յեկանք, վոր մի խաղ խաղանք նրա գլխին, — ասացին աղջիկները:

— Լավ խաղ ցույց տվեց, — պատասխանեցին մերոնք:

— Դե լավ, արի ընկերանանք, — ասաց «Կարմիր Մարուսյան» ծիծաղելով և ձեռքը մեկնելով նրան: Նրանք սեղմեցին իրար ձեռք:

— Մենք լավ ընկերներ կլինենք սրանից հետո,—ասաց Կավկազսկին նրա ձեռքն ամուր սեղմելով: — Այ, յես կհյուրասիրեմ ձեզ ձմերուկով: Յեվ նա ձմերուկից յերկու կտոր կտրեց ու տվեց մի-մի կտոր:

Նրանք շնորհակալություն հայտնեցին ու ծիծաղալով վերադարձան:

Մենք ել սկսեցինք մեր աշխատանքը: Այս անգամ ով նիգով եր աշխատում, վերցրեց բահը, ով բահով՝ վերցրեց նիգը: Վոչ մի տրտնջող: Ահա ձեռնոցները ձեռքերիս նիգով փորում եմ ընկերոջս ձեռքում շախտյորկան իջնում ե ու բարձրանում ե հետո տաշկան ե գլզալով գնում ու գալիս: Նույնն անում ե կողքիս գուլգը, նրա հարեւանը ե բոլորը:

Փորում ենք:

Կեսոր ե: Արևը կանգնել ե գենիթում, վոչ առաջ ե գնում, վոչ հետ:

Բոլորը մերկ են, կարծես լողում են արևի տակ:

Նեղ, յերկաթե ծորակի նման կախված յերկնքում, յեռման ջրի կաթիլներ փոխարեն, արևը հրե շիթեր ե թափում մարդկանց գլխին, մարմնին վոչ թե այրելու, այլ մաքրելու, հանգստացնելու համար: Մարդիկ տարված են այլ գործով ե բոլորովին չեն նկատում, վոր արևը կրակ ե լցնում նրանց գլխին ջրի տեղ, այրում ե նրանց մեջքը ե հանում մարմնից ջուր:

Յեվ այդ հազար տարիներով լցված, մի կաթիլ ջրի յերես չտեսած անապատը, վորի ավազանները ծծել են արևը ե շիկացել նրա ճառագայթների տակ, ծծում, կլանում ե նրանցից թափված կաթիլները, ե վոչ մի հատիկ գոլորշի չի բարձրանում վեր:

Ի՞նչ են անում այս մարդիկ անապատում, ի՞նչ են ուզում այս արևախում ավազներից:

Անապատի լայնութլան միջից յերկաթե վիթխարի մի ամբոց ե դցվել վեր, վորի չորս կողմից բարձրանում են բետոնե ու աղյուսե դածր ու բարձր շենքեր: Այդ վիթխարի ամբոցի վրա ամրացրած յերկաթե ձողի ծայրին ծածանվում ե կարմիր դրոշակը:

Յեվ նրա տակ խմբված մարդկային այդ բազմությունը, վորը խոսում ե տարբեր լեզուներով, շաղախված յերկաթի ու բետոնի մեջ, ցեմենտի փոշին ծծելով—լծվել ե մի ծանր գործի: Յեվ նրանք, հոգով մեկ, այդ ծանր բեռն տակ, փոխում են իրենց տեսքը, նմանվելով յերկաթին ու բետոնին ե իրար՝ իրենց կազմվածքով:

Ահա յերկաթե կամարների վրա ծերունի վարպետը յերկաթն ե միացնում իրար: Այնտեղ քարտաշը, կռացած յերկաթե ձողերի վրա, քրտնաշաղախ բետոնը լցնելով, պատերն ե բարձրացնում վեր: Այն-

տեղ ձգվել ե ահա հողափորների շարքը, վորոնց գլուխներն են միայն յերևում, ու դեմքերի վրա նստել ե քրտնքի ե փոշու շաղախը: Փորում են հողը: Արևը խանձում ե նրանց մաղերը, այրում ե նրանց կաշին ե հոսում ե քրտինքը: Մետաղագործը յերկաթը թրջում ե քրտինքով ե կտրում: Քարտաշը քարերն ե կոկում ե ամրացնում քրտինքով: Հողափորը պատում ե հողը նիգի ծայրով՝ թրջված քրտնքով:

Կավկազսկին մի րոպե կանգ առավ փորելուց ու մի հայացք ձգեց իր շուրջը: Նա, կարծես, նոր եր ուզում տեսնել, թե ինքը վորտեղ ե գտնվում:

Հեռուն՝ արծաթափայլ հոսանքով Վոլգան, վոր բաժանել եր այդ հարթավայրը ե գոտու նման բոլորել Տրակտորստրոյի շուրջը, շողշողում ե արեւի տակ: Վոլգայի այն ափը՝ «Զավոլգան» թաղված եր ծառերի ու կանաչների, արևի լույսով վողովված կաթնավուն ֆոնի մեջ, ե նրա միջից բեկրեկում եյին արևի ճառագայթների տակ տանիքներն ու լուսամուտները:

Այդ ժամանակ նա հիշեց չքնադագեղ Կովկասն իր վերամբարձ լեռներով, իր խշխշացող գետերով ե կանաչ արտերով, թե ինքն ի՞նչ պես եր ընկել այստեղ... բայց տեսավ, վոր «Զավոլգան» շատ նման ե կովկասյան դաշտերին, իսկ ինքը գտնվում եր այն մասում, վորտեղ անապատ եր ու ավաղ: Յեվ այդտեղ յեղած հազարավոր մարդիկ, վորոնց թվում նաև ինքը, ուզում են ծագեցնել այդ անապատը ե կյանք տալ նրան: «Կլինի Կովկասի նման» — անցավ նրա մտքով:

Այստեղ փոփում ե նորատունկ անտառը, վորի փոքրիկ ծառերն որորվել են ուզում: Նրա միջից բարձրանում ե, չորս կողմը խճճված յերկաթացանց ամրոցը — տրակտորի հսկա գործարանը: Յերկաթյա սյուները շողշողում են ամառվա փոշով հաղեցած ողի մեջ:

«Լեռներ՝ են բարձրանում անապատի վրա...» շշնջաց նա, այն տարբերությամբ, վոր մեր լեռները կանաչ են, հողից ու քարից... իսկ սրանք իրենք են շինում, յերկաթից ու բետոնից են... կանաչագուրկ, սև... ե լեռ ե, ե ամբոց ե արդյունավետ կայուն — գործարան ե այդ գործարանում շինված մեքենաները պիտի տարածվեն ամեն կողմ, պիտի հեղաշրջեն կյանքը, բարձրացնելով ցնծադին աղաղակներ...»:

Այդ ժամանակ դիմացի ճանապարհով անցավ մի տրակտոր, թողնելով փոշու ամպեր ե անիվների յերկաթե ատամներով պատառոտված դետիներ: Նրա կողքին Կավկազսկին կարգաց՝ «Ինտերնացիոնալ»:

«Քառասուն հազար...» անցավ նրա մտքով:

Պիտի արշավի յերկաթն ամեն կողմ ե անցնի Կովկաս, պիտի մտնի ամեն խրճիթ, ամեն անկյուն այդ բարի հյուրը: Վարպետը կանգ կառնի ե ուրազը վար կդնի արորը շինելիս: Ծերերը կվողբան

գառնագին, պառավները խաչ կհանեն յերեսներին: Իրար վրա կհա-
վաքվեն անպետքացած արորները: Իսկ արտերում կարշավեն տրակ-
տորները, կպատռեն հողը՝ խոր ու համարձակ: Յերիտասարդները կգո-
չեն ցնցագին, գլխարկները վեր կգցեն և կվողջունեն տրակտորի հաղ-
թանակը:

Տրակտոր «Ինտերնացիոնալը» վերադարձավ, քաշ տալով ցեմեն-
տի տակառները լցված ավտոմոբիլը, դետինը պատառ-պատառ անելով:
Նա նորից կարգաց «Ինտերնացիոնալ»:

Թող «Ինտերնացիոնալը» պատի մեր արտերը: Թող շվարեն
ձերերը և թող թնդա յերիտասարդ գյուղը:

Նա ցնցվեց մի տեսակ. զգաց, յերակները հեղեղում են սիրտը:
Նա խփեց նիզը ուժգին: Նրա կրծքի ու թեվերի մկանները մերթ կծ-
կլվում էին, մերթ բացվում, գունդ կազմելով: Կավկազական կուտա-
կում եր տրակտորային ուժն ու կամքն իր մկաններում:

Բանվորները շարունակեցին աշխատանքը:

«Տրակտորսարոյը» կառուցվում եր,

«Տրակտորսարոյը» բարձրանում եր:

ԱՐՏԵԶՅԱՆ ԶՐՀՈՐ

(ՊԱՏՄՎԱԾՔ)

ԳՈՒՐԳԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Կես գիշերից անց եր, մութ ու խավար փողոցներում ամեն ինչ
անտեսանելի: Տիրում եր մեռելային լուսթյուն: Փողոցներում դադարել
եր յերթեկուսությունը: Յերբեմն հատուկ կենտ մարդիկ ուրվականի նման,
լուռ ու անխոս շտապում էին իրենց տները:

Աշնանային սառը քամին սուլում եր մթության մեջ և խփելով
տանիքների թիթեղներին, սլանում առաջ: Յերբեմն ել հին յեկեղեցու
գմբեթից լավում եր բույի վույոցը և կորչում մթության մեջ:

Յեկեղեցին ամենաբարձր շենքն եր, բայց նրա գիմաց ծառացել
եր տախտակաշեն մի բուրգ (վիշկա), վորը առավել դերադանցում եր
առաջինին:

Յեկեղեցում մութ եր, իսկ բուրգի ներսը լույս, յեկեղեցին լուռ եր,
իսկ բուրգի մեջ լսվում եր մարդկանց աղմուկ:

Վերջին ժամանակներն այդ բուրգն եր, վոր ամբողջ գյուղաքա-
ղաքին տալիս եր կենդանություն: Մարդիկ այդտեղ ժրջան ու
անխոնջ կերպով աշխատում էին անդադար, և աշխատանքի տեմպը մի
ուրույն կենդանություն եր տալիս փայտաշեն բուրգին:

— Դեհ, Իվան, խողովակը շտապ շրջիր:

— Վերտեղ գցեցիր ունեղիքը ե, Իսմայիլ. հեշ ուշադրություն չես
դարձնում:

— Դե լավ, Պախան (այդպես էին անվանում ավագ բանվորին),
յես առանց ըո ասելուն ել դիտեմ, շատ քիթ ու մոռթդ մի ծոմիր:

— Հաբեթ, դուն ել շատ մի խոսիր, վերցրու խողովակը:— Հաբեթը
խլելով խողովակը, ամբողջ ուժով քաշեց դուրս, ասելով.—

— Իսմայիլ, այնպես ամրացրու արգելակը, վոր կարողանամ խողո-
վակը դուրս քաշել, թե չե գլուխը կաշում ե գետնին:

— Հաբեթ, Հաբեթ, այդ խողովակը... լավ, վոչինչ, քաշիր, քաշիր:
Այդ խոսքերի հետ միասին արագընթաց իջնում եր խողովակը,
իսկ Հաբեթը քաշում եր առանց կանգ առնելու: Լսվեց զրնգոց:

— Կանգ առ, գցիր արգելակը—գոռացին բոլորը:

— Դե լավ, Իվան, կամաց գոռա:

— Հաբեթը խողովակը անդավորելուց հետո, անցավ ներս, ծած-
կելով դուռը:

Գրիշան, վոր աշխատում եր դռան մոտ, դուռը բացեց:
— Գրիշա, դուռը դիր, չե՞ս տեսնում առանց այդ ել ցուրտ ե:
— Հարեթ ջան, ճիշտ ասած քեզ համար միշտ ցուրտ ե, նույնիսկ ամռան տաք որերին:

— Դե թող քո այդ ծաղրդ. չե՞ս տեսնում շորերս թաց են:
— Ի՞նչ ե պատահել քեզ, Հարեթ, դու միշտ բողբոլում ես, բայց վոչ մեկը տեղին չե—հեգնական ժպիտով ասաց Պետրոսը:

— Չգիտեմ ինչո՞ւ Գրիշան միշտ վերալորական խոսքեր ե ուղղում ինձ: Յես այդ խոսքերը տանել չեմ կարող, նույնիսկ մեկ րոպե անգամ: Ամռանն ել մարդ կմրսի, վոր ասում ե:

— Եդ թողնենք, գիտե՞ս ինչ կա, Իսմայիլ:
— Ի՞նչ կա Հարեթ:
— Յերեկոյան յեկավ այստեղ գլխավոր ինժեները:
— Ի՞նչ ասաց:

— Յեկավ, ստուգեց դուրս հանված հողի շերտերը և ասաց.— յեթե մի կես մետր ևս փորվի, կարող ե շատրվան խփել, իսկ յեթե վոչ, ուրեմն պետք ե դեռ քանդել հինգ մետր ևս, վորով ընդհանուր խորությունը կլինի յերկու հարյուր քառասուն մետր:

— Յեթե վոչ, ուրեմն մինչև դարնանը հա՞—դժգոհությամբ ավելացրեց Գրիշան:

— Դե իհարկե:
— Չե, ընկեր Գրիշա, ինժեները շատ փորձված մարդ ե: Գիտե՞ս, նրան կարմիր ինժեներ են անվանում: Վերջին տարիներս նա աշխատել ե Բազմի նավթահանքերում և ստացել ե լավ ինժեների կոչում:

— Ասենք թե այդպես,— գոչեց Հարեթը, բայց յեթե մենք, բանվորներս չաշխատենք հարվածային կերպով, չբարձրացնենք մեր աշխատանքի վորակը, ինչքան ել լավ ինժեներ լինի, նրա գործը թղթի վրա կմնա, ու մեկ ել ինժեների գործը թղթից կյանքի մեջ անցկացնելով, պետք ե մենք լավ հսկենք, թե վորքան նա համապատասխան ե սկսած գործին, բանվորի շահին, չե՞ վոր մենք կյանքում անցել յենք փորձառության դպրոցը:

— Հարեթ, դու քո աշխատանքը կատարիր, եդ քո խելքիցդ վեր ե:

— Հե՛չ ել վեր չե,— մեջ մտավ Իսմայիլը— մենք աչքաբաց պիտի լինենք, հսկենք և ամեն բան հալած յուզի տեղ չընդունենք, թե չե պրոմպարտիայի վնասաբարությունը կըկրկնվի:

— Ուրեմն դեպի գործ, դեպի գործ, լոմը ձեռքին մոտեցավ Ուսխանը, գործի անցնենք յեռանդով և հարվածային թափով:

Նորից եյին պտտվում խողովակները, նորից բանվորները պոկելով խողովակները, դարսում եյին վիշկայի պատերի դիմաց: Աշխատանքը

և այդ տաք վիճաբանությունը միախառնվել եյին իրար, առանց խանդարելու մեկը մյուսին: Իսկ մեքենան իր ծանր տնքոցով ծխի քուլաներ եր շարժում դուրս: Մեքենավարը չեր մասնակցում խոսակցությանը, քթի տակ դանդաղ յերգում եր:

— Պետրո, անցիր թմբուկի վրա, յես քիչ հանգստանամ: Ստանան տանի, Գրիգորն անցած ուրը գնաց Ռոստով գործիքի, հիմա թե նրա տեղն եմ աշխատում, թե իմ տեղը:

Պետրոն անցավ թմբուկի վրա: Պախանը թողնելով արգելակը, փաթաթվեց վերարկույի մեջ, պառկեց տախտակների վրա, վորոնց տակ դասավորված եյին գործիքները:

— Պետրո, գիտե՞ս, զգուշ կացեք, կարող ե պատահի, վոր մենք այստեղ կորչենք:

— Հա, հա հա... Պախան դու քնիր. հաջողությունը մեր կողմն ե, մի պայթուն պատահի, քեզ կտեղափոխենք—ասաց Պետրոն, վորի վրա բոլորը ծիծաղեցին:

Արդեն իջեցնում եյին խողովակները. դադարել եր խոսակցությունը: Իսկ մեքենայի յետմիջ լավում եր մեքենավարի վողեղոված յերգը ու փոկերի շաշյունը: Բանվորները դարձել եյին անխոս, բոլորի դեմքի վրա սահում եր մի ներքին ուրախություն. կարծես իրար հայացքով եյին հասկացնում ամեն ինչ:

Մուծ, խավար գյուղաքաղաքում վիշկան դարձել եր լուսատու փարոս, վորի մեջ աշխատում եյին թարմ, յերիտասարդական ուժեր: Լուծյան մեջ լավում եր յերկաթների զոնգոցը և մարդկանց հեմալու ձայնը:

Վիշկայի դռները փակ եյին: Դռների ճեղքվածներից ելեքտրական լույսը դուրս եր ընկել, աղոտ կերպով լուսավորելով շրջապատը: Մեքենավարը դադարեց յերգելուց: Առաջին մասում նորից սկսվեց շշուկ և ապա բարձրանալով հասավ գոռում-գոչումի: Նորից սկսեցին խոսել, վիճել ու յերբեմն ել հռհալ և ծիծաղել:

Այստեղ կարելի յեր գտնել ամեն տեսակ ազգ և լեզու: Ամենքը խոսում եյին թե իրենց մայրենի լեզվով, թե ռուսերեն և այդպիս անվերջ:

Նորից լավում ե մեքենավար Ռուզիկի յերգի ձայնը: Նրան ձայնակցում ե Իսմայիլը, թուրքերեն յեղանակով: Աշխատանքը նորից թափ ստացավ:

Լուսինը բարձրացել եր յերկնակամարի վրա: Նրա կաթնաման լույսի տակ ամեն ինչ դադար եր ստացել: Յերթեվեկող չկար, փողոցները լուռ եյին: Այդ գիշեր ամեն ինչ գրավիչ եր: Իսկ Պախանը խուժում եր խորը քնի մեջ:

Բացվում ե լույսը, փշուռ վաղորդյան սառը քամին: Կանայք շտապում են շուկա, կողովները ձեռներին: Շատացել եր մաշականց յերթեկեկությունը: Ըստ ամենորոյա սովորութեան, փողոցով անցնողները կանգնում եյին վիշկայի մոտ, դիտում յերկար ու անցնում:

Վիշկայի դիմաց գտնվում եր յեկեղեցին: Յեկեղեցու հյուրերը շատ քիչ եյին. մի քանի տասնյակ ծերեր աղոթում եյին յերկնային սին բարձունքներին: Բայց այդպես չեւ յերիտասարդությունը, նա հետաքրքրվում եր առօրեայ կյանքով, շինարարական աշխատանքներով:

Գնալով, անց ու դարձը շատանում եր, հետեւապես շատանում եյին և վիշկայի հյուրերը: Հավաքվում եյին մեծ մասամբ յերիտասարդները, վորոնք իրենց յեռանդով պատրաստ եյին փոխարինելու բանվորներին, բայց վորովհետեւ բանվորները թույլ չեյին տալիս, ուստի նրանք նայում եյին կատարվող աշխատանքին և մերթ ընդ մերթ կատակի տալիս իրար ու ծիծաղում:

Սրանց վրա ավելանում եյին նորերը: Գնալով վիշկան շրջապատող բազմությունը ստվարանում եր:

— Ձե, վերջը լավ կլինի. գիտես հասարակությունը վորքան դժվարություն ե քաշում ջրի պակասությունից: Այ մարդ, ջուր չկա, վոր մարդիկ մի կուշտ լվացվեն ու շորերը լվանան: Են նեխված ջրհորների ջուրն ել խոտ խմել չի լինում, այնքան աղի յեր—ասաց մի յերիտասարդ, վորը հետաքրքրութեամբ հետևում եր կատարվող աշխատանքին:

— Այդ մասին խոսք անգամ չի կարող լինել—ավելացրեց մի ուրիշ գյուղացի, վորը կանգնած եր առաջինի կողքին:

— Այ մարդ, մարդիկ հիմնական գործ են բռնում: Նիկողան քանի հարյուր տարվա թագավորություն եր, հա, յեթե տաս տարին մի այգալիսի գործ շինեւ, յերկիրը հիմա ծաղկել եր: Բայց տեսնում ես, տասը տարվա պետություն ե, ինչեւ ե շինել—խոսեց մի սպիտակամորուք միջահասակ մարդ:

— Բա ինչ ես կարծում, մեկ խելքը լավ ե, յերկուսը՝ առավել: Մարդիկ սավետ են նստում, գրում, ջնջում և վերջը արած գործերը տես... բարձրաձայն գոչեց մի մարդ, վորին պարտիզան եյին անվանում:

Բոլորի դեմքի վրա սահում եր մի տեսակ ուրախ ժպիտ: Ամենքը տարված եյին կատարվող աշխատանքով:

— Ճանապարհ, ճանապարհ,—լսելի յեղավ ամբոխի միջից: Բազմությունը ճեղքվեց և ներս մտավ վիշկան բանվորական հագուստով, չաղ դեմքով, կապուտաչյա մի յերիտասարդ:

Անցնելով վիշկայի մեջ, սկսեց գննել դուրս հանված ավաղի վերջին շերտը: Վերցրեց մի փոքր կտոր և մատերի տակ տրորելուց հետո, դուրս հանդիստ շարժեց, ապա մոտեցավ մեքենային, շոշափեց մեքենայի պտուտակներն ու նորից մոտեցավ բանվորներին:

— Պախան—տեսնելով Պախանի տեղը Պետրոյին, դիմելով նրան, Պետրո:

— Լսում եմ:

— Յես գնում եմ փոստ, այնտեղ շտապ գործ ունեմ: Հենց վոր խողովակները կ'իջեցնեւ հորը, աշխատանքը խեղույն դադարեցրեւ: Յես շուտով կ'վերագառնամ:

— Ինչո՞ւ, ընկեր ինժեներ, հարցրեց Պետրոն:

— Ինչո՞ւ, հետաքրքրվեցին մյուս բանվորները շրջապատելով նրան:

— Նրա համար, վոր, ինչպես ցույց են տալիս դուրս հանած ավաղի վերջին շերտերը, կարող ե ջրի շատրված խիլի:

— Շատրվան,—դարձացած հարցրին բոլորը, ավիլի մոտենալով նրան:

— Այո, շատրվան—սառնարյուն պատտխանեց ինժեները, իհարկե շատրվան, չե՞ վոր մենք փորում ենք վոր ջուր հանենք և ահա հասել ենք ջրին և այդ ջուրը կարող ե շատրվանի պես ժայթքել:

— Ջուր, շատրվան, շատրվան... կրկնեցին շրջապատող բանվորներն ու գյուղացիները: Լուրը կայծակի արագութեամբ տարածվեց բոլորի մեջ, հայտնի յեղավ ամենքին:

Ինժեները մի քանի հարկավոր կարգադրություններ անելով, շրտապ հեռացավ:

— Պախան, Պախան,—շրջապատեցին բանվորները Պախանին:

— Հը, ինչ՞ ե,—ծոմոնելով և տնքալով գոչեց Պախանը:

— Ինչ՞ ես տնքում, տես աչքերը վորքան են ուռել: Շուտ վեր կաց:

— Ինչ՞ կա, ինչ՞ ե պատահել, ինչ՞ ես ձայնդ գցել դուրսդ,—աչքերը տրորելով մոտեցավ Պետրոյին Պախանը:

— Այդպես բան կանին, Պախան, դու մեզ խայտառակեցիր, ծիծաղելով ասաց Գրիշան:

— Ինչ՞ ե պատահել, դե սասցեք, ինչ՞ եք հասկանում:

— Ինժեները այստեղ եր. ասաց վոր կարող ե...

— Հը, ինչ՞ կարող ե—ընդհատելով գոչեց Պախանը—շուտ ասա:

— Պետրոն պատմեց ինժեների ասածը:

— Ոհո, շատրվան, տղայք այստեղ, կարող ե մի պատուհաս գալ մեր գլխին—յերկնոտ կերպով ասաց Պախանը, նայելով չորս կողմը, նայելով ձորին:

— Ինչ՞ պատուհաս, դու այն ասա, վոր մենք մեր աշխատանքի արդյունքը մեր աչքով կ'տեսնենք:

— Բայ Խնչ եյիր կարծում, ուզում ես մեր սեփական աշխատանքի արդյունքն ել չտեսնենք, Խնչ ե:

— Հա... հա,— ծիծաղեց Պետրոն,— այ տղա, Հաբեթ, Խնչ լավ խոսքեր ես ասում:— Իսկ դրսում, ուր գիտեցին բանն ինչումն ե, վոգեվորությունը դադարեցակետին եր հասել: Սողովակները ղրնգալով իջնում եյին, փոկը շխկում եր խլացուցիչ աղմուկով, իսկ մարդկանց մեջ տիրում եր տաք խոսակցություն: Աշխատանքը դադարեց, խողովակներն արգեն իջեցրել եյին: Բաղմությունը բոլոր առ բոլոր ըստ վարանում եր: Դրսի բաղմությունը ուզում եր ներխուժել վիշկայի մեջ, բայց Գրիշան, Պախանի կարգադրությամբ կանգնել եր դռան առջև և թույլ չեւ տալիս վոչ վոքի ներս մտնելու: Մարդիկ դրսում աղմկում եյին անվերջ: Արեւ բարձրացել եր յերկնակամարի վրա և իր վոսկեգույն ճառագայթները սփռել վիշկայի ճակատին: Ծառագայթները թափանցելով ճեղքերին, կարմիր շողերով ներկել եյին վիշկայի ներսը: Բանվորները գործիքներն եյին դետեղում, յերբեմն իրար հրում, ծիծաղի տալիս, յերգում ու յերբեմն ել իրար հետ ուժերը փորձում:

Գրիշան ամենից հաղթանդամ եր. բոլորը խուսափում եյին նրանից: Բանվորները աշխատանքն ավարտելուց հետո, շարվեցին վիշկայի պատերի մոտ, մեկին դեցեցին արանք, այնքան հրեցին այս ու այն կողմը, վոր հոգնեց: Թողնելով նրան, մի պահ տիրեց լուռություն: Իսկ մայիլը իրա բայաթիլով խախտեց տիրող լուռությունը: Քիչ հետո բոլորը միասին յերգեցին «Մեր յերգը»:

Ձնգա, դու. դնգա, յերկաթ ամենի,
Հեվացեք ընկերներ, ուժ տվեք բազուկի,
Գիդանտներ մենք շինենք, բերդեր անապի,
Մեր կամքով պողպատ, յեռանդով կորովի:

Դե քաշեք, մենք քանդենք, մայր հողի կուրծքը խոր,
Դե քաշեք, մենք շինենք գիգանտներ ամեն ուր,
Թշնամին դավադիր, ամեն տեղ, միշտ հսկիչ,
Նենգաբար չափում ե ուժը մեր վերելքի:

Ով մեղ չգիտե, թող գա ու տեսնի,
Հարվածային մեր թավը յեռանդի,
Թող գան ու տեսնեն բոլոր աշխարհից
Մեր յերթը ուժգին, յերգը վերելքի:

Այդ հաղթական ձայնը, ինչպես զրնգան մետաղ, տարածվեց չորս բոլորը, վորին արձագանք տվեցին շփոթող պիոներական շարքերը, վորոնք անցնում եյին վիշկայի մոտից:

Այստեղ ընկերական սերն այնքան եր դարգացել, վոր մեկը մյուսի համար ավելի շատ եր մտածում, քան ինքն իր համար: Մեկի թեթև ֆրասովելը տխրություն եր պատճառում բոլորին: Չկար ազդային վոչ մի խորություն, թշնամություն, նախանձ:

Իրարանցումն ավելի էս աշխուժացել եր:

Մարդիկ յերբեմն գալիս, վիշկայի տախտակյա պատերի անցքերից նայում եյին և նորից վերադառնում իրենց տեղը:

Դպրոցի աշակերտները շտապում եյին դպրոց, կառապանը մտրակում եր ձիուն, վոր շուտ հասնի կայարան: Յեվ ամենը, ամեն մարդ շտապում եր դործի, բայց բոլոր անց ու դարձողները, նայում եյին վիշկայի գազաթին, ապա խառը ամբոխն եր անցնում:

Մարդիկ դանդաղ ցրվում եյին տները, իսկ արևը սառը ճառագայթները թափում եր ուրախ ամբոխի վրա:

Աշխատանքը նորից թափ եր ստացել: Ինժեները, վորը մի տեղում դադար չունեւ, բոլոր առ բոլոր հսկում եր աշխատանքին: Խողովակները, վոր վաղուց եյին իջեցրել, արդեն պատրաստ եյին: Յերկաթյա լինդը ամրացրել եյին խողովակներն հակառակ ուղղությամբ: Բանվորները պատեցնում եյին, իսկ փորիչ մեքենան ներսում ծակում եր հողի կուրծքը:

Բանվորները այնպես զրուշ եյին շարժվում, վոր կարծես ահա պայթում կառաջանա: Ինժեները շրջում եր, առանց մի բոլոր կանգ առնելու, գալիս, խողովակներն եր նայում, յերբեմն ել ականջը մոտեցնելով խողովակին, ուշադիր ականջ եր դնում, արդյոք չկա ստորյերկրյա ցնցում: Թողնելով խողովակը, վերցնում եր տետրակը, հաշվում խորությունը և խողովակների թիվը:

Մոտենալով պտտվող խողովակներին, նա չափեց վերջին խողովակը, հետո մոտեցավ մեքենային, նայեց բոլոր պտտառակներին և ապա հանելով ժամացույցը, բարձր ձայնով գոչեց—

— Տղերք, աշխատանքի ժամանակը լրանում ե, մնացել ե միայն տասը բոլոր, հինգ բոլորն աշխատանք, վորից հետո կարող եք ազատ լինել:

Բանվորները չեյին սպասում այդ հայտարարությանը. կարծես մի խորին տրտմություն տիրեց բոլորի դեմքերին:

— Ձե, ընկեր ինժեներ, մենք կաշխատենք և մյուս հերթի փոխարեն — կարծրատակելով խնդրեց Իսմայելը, վորը իր ամբողջ ուժով քաշ եր տալիս յերկաթի ձողը:

— Զիշտ ե ասում Իսմայելը— գոռացին բոլորը:

— Մենք պիտի աշխատենք— ձայնակցեցին առավոտվա հերթի բանվորները, վորոնք նոր եյին հավաքվել:— Մենք մարդ իր ժամանակին, մենք մեր հերթը վոչվոքի չենք տալ: Աղմկելով հարձակվեցին

նորեկները աշխատանքը խելու: Ինժեները ժամացույցը զլխից բարձր պահելով, գոռաց նորեկների վրա:

— Ընկերներ, դեռ նրանք յոթը բոլոր ժամանակ ունեն աշխատելու: Վերջինները յետ կանգնեցին, իսկ առաջինները շարունակեցին: Ինժեները նորից մոտեցավ պատվող խողովակներին, ականջը կպցրեց նրանց և սկսեց լուռ ականջ դնել: Նրա չորս կողմը պատում էին բանվորները, իրենց հետ քաշ տալով յերկաթյա հաստ ձողը: Հանկարծ լավեց սառըները ցնցում: Յերկաթները զրնգացին, կըպչելով խողովակներին: Ներսից լավեց ֆշշոց:

— Դուրս, դուրս—գոռաց ինժեները:

Բոլորը թողնելով աշխատանքը, դուրս նետվեցին: Հաբեթը շփոթվելով գլուխը խփեց վիշկայի դռան տախտակներին ու ընկավ: Փախչող բանվորները վտախ տակ տալով նրան, դուրս թռան: Գրիշան միայն հետ դառավ Պախանի հետ և բարձրացնելով Հաբեթին, դուրս տարան:

Յերկաթների զրնգոցը և վիշկայի ձոճը, այնպիսի ահռելի ձայն էին հանում, վոր մարդիկ սարսափահար կորցնում էին իրենց դիրքը և շփոթված վազում իրենց ազատելու:

Բանվորները մի ակնաթարթում դատարկեցին վիշկան: Ինժեները փրկված համարելով բոլորին, շտապեց դուրս թռչելու: Սակայն մի ինչ վոր ույժ հետ մղեց նրան և քաշելով գցեց տախտակամածի վրա: Յերկաթների ցնցումից նրա առանց այն էլ յերկար վերաբեկույի փեշերն ընկնում էին յերկաթյա ձողից և փաթաթվելով նրան, խանգարում թռիչքին և հետ մղում:

Յերկար մաքառելով վերահաս արհավիրքից ազատվելու, չի կարողանում, պառկում և մեջքի վրա ու ձգում իրեն դեպի վիշկայի անկյունը:

Դրսում կարծես մի դղրդյուն առաջացավ. խուճապի մատնված ամբոխը ցրվեց վորքան կարելի յե հեռուն: Ինչպես հրաբուխ, դուրս ժայթքեց ջրախառն ցեխը, վորը խփելով վիշկայի առաստաղին, ցրվելով նրան և դուրս սլացավ: Յեխի շիթերը ցրվեցին ողի մեջ, արևի առաջն առնելով, մութ ստվեր ձգեցին վիշկայի վրա: Վիշկայի կատարի տախտակները սավառնելով ողի մեջ, ընկնում էին գետին:

Հաբեթը հազիվ դուրս գալով վիշկայից, իրեն գցեց վիշկայի դիմաց գտնվող քանդակը: Բանվորները տեսնելով Հաբեթի վիճակը, իսկույն նետվեցին դեպի նա և խելով նրան, հեռացրին սպառնող վտանգից: Հասարակությունը մի պահ իրարով անցավ: Մարդիկ գրկելով Հաբեթին, փայփայում էին նրան: Հանկարծ ամբոխի մեջից լսելի յեղավ մի ձայն:

— Ինժեները, ինժեները դուրս ե: Նա, նա խեղդվեց, ողնեցը:

Իսմայիլը գոռալով նետվեց դեպի վիշկան, նրան հետևեցին Գրիշան և Պետրոս: Բոլորը սլանում էին առաջ, չվախենալով ժայթքող փոթորիկից: Յեխոտ ջուրը խանգարում էր նրանց առաջ գնալու: Գլանները վիշկայի կատարից ընկնելով ցած, ջարդում էին հատակի տախտակները և խրվում հողի մեջ: Վիշկայի ներսից լսվում էր խորը ֆշշոց ու ավելի սաստկանում յերկյուղը: Բայց այդ բոլորը չէր խանգարում անվեհեր բանվորների աշխատանքի ընթացքը: Հանկարծ դուրս յեկավ ցեխով ամբողջովին պարուրված մի մարդ, վորը գլուխը կորցրածի նման չգիտեր վորտեղ և ուր և գնում:

Դա ինժեներն էր:

Բանվորները, տեսնելուն պես, խեցին նրան և թեվերի վրա հեռացրին վիշկայից: Բազմությունը աղմկելով շրջապատեց նրանց: Շուկայի մարդիկ բոլորը վազեցին դեպի ջրհոր և խառնվելով բանվորներին, կազմեցին մի հսկա ամբոխ:

Մարդկանց շարժվելու հնար չկար: Յեկվորները մեկ մեկ մոտենում էին բանվորներին, համբուրում նրանց սև ճակատը և ասում:

— Կեցցեք դուք, կեցցեն ձեր գործերը:

Իսկ հետևից լսվում էր մի ծածուկ փսփսոց:

— Արամ, մի քանի հոգի կոտորվել են թե վոչ:

— Տո նրանց քոքը կտքվի, նրանք կկոտորվեն վոր...

Այդ վերջին խումբը առևտրական վոհմակն էր, վոր յեկել էր ուրախանալու վնասվածների վրա, բայց տեսնելով հակառակը, լուռ հեռացավ դեպի խանութները:

Շատրվանը կամաց կամաց փոքրացավ և դադարեց:

Ողի մեջ լող տվող ջրի ցողերը արևի առաջ կապել էին գեղեցիկ ծիածան և կանաչ կարմիր գույնով գրկել վիշկայի տախտակները: Ինժեները իրավացի յեր, շատրվանը ժայթքեց, բանվորները տեսան իրենց ծանր աշխատանքի արդյունքը:

Արտեղյան ջրհորը պատրաստ էր:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏ (ԱԿՆԱՐԿ)

Խ. ԴԱՐՈՒՐԻ

1.

Առավոտ եր, շահկներն ուժգին սուլում եյին: Բանվորները կենսուրախ շտապում եյին գործարան: Գործարանում ամենից առաջ մշտնում եյին կարմիր անկյուն, վորտեղ նախաճաշ եյին անում և աչքի անցկացնում զանազան տեսակի թերթեր և ամսագրեր: Կարմիր անկյունում ինչեր ասես, վոր չկա: Ել պլակատներ, ել լողունգներ: պատից ժպտում են կենինն ու Ստալինը, տոնական հայացքով նայում և Ռազմհեղկոմի նախագահ ընկ. Վորոշիլովը: Կսվում և ռադիոյի զրավիչ ձայնը, վորը յերգում և, կամ ղեկուցում: Նրա ձայնը ձուլվում եր բանվորների ուրախ խոսակցության հետ:

Կարմիր անկյունում առավոտները կարծես յերեկոյթ լինի. վոմանք ծիծաղում, վիճում են, վոմանք ել դաշնամուր են նվագում: Ահա ռադիոյի մոտ կանգնած և փականագործական ցեխի հարվածային բրիգադի բրիգադի ընկ. Հրաչյա Պսակյանը, վորի աչերից կարծես հուր և թափվում. բոսորավառ դեմքով, քշտած բաղուկներով նա լսում և ռադիոյի զրավիչ յերգը:

Ժամը 7-ն եր. լավեց սուլոցը, ու աշխատանքային բանակը գործի անցավ. բաժանմունքներում արդեն լավում եյին մուրճերի զարկերն ու սարքոցների վորոտը:

2.

Փականագործական ցեխում արդֆինալանը չի կատարվում, վորովհետեւ գործալիքներ թիվը կազմում և ամեն ուր 2—5 հոգի. բացի գործալիքներից, կան նաև ծուլեր, սիմուլյանտներ, վորոնք աշխատանքի ժամերը լրիվ չեն ոգտագործում, ժամերով քաշ են գալիս կորեկորներում, ծխում ու զանազան տեսակի վոչ արդյունավետ գործերով զբաղվում:

Այդ ցեխի հարվածային ենտուղիաստ բանվորները վառ ավյունով աշխատում են, բայց լինչ արած, ֆլասատունների ցեխի պլանի ի-

րագործման խոչնդոտ հանդիսացողների թիվը մեծ է: Վերցնենք չարամիտ գործալիք Մանուկյան Սարգսին, վորը ցեխի ամենաակտիվ գործալիքն և, նա մի ուր գալիս, յերկու ուր չի գալիս աշխատանքի: Վորպես հայտնի գործալիք, մի յերկու անգամ սև տախտակին և հանված, աշխատավարձը սև կասսայից և ստացել ու մի շարք նկատողություններ, բայց և այնպես այս բոլոր միջոցները մաղաչափ անգամ չեն ազդել նրա վրա:

Փականագործական ցեխի հարվածային բանվոր Պավլին Սարգսի մասին շատ վատ և պատմում. ահա թե նա ինչ և ասում. «Կիրակի ուրը տեսա նրան գինեւոնում նստած մի ուրիշ հաստափոր մարդու հետ, ողի յեր խմում, հարբած եր և բերանից այնպիսի խոսքեր եր ժայթքում, վոր նրա տեղը յես ամաչեցի»: Գրեգորը պատմում և, վոր նա հարբում և, փողերը կարտում. տանուլ տալիս և, տուն վերադառնալով, հայհոյում, կովում և բոլորի հանդիստը խանգարում:

Յերը Պավլին ու Գրեգորը վերջացրին իրենց խոսքը, Հրաչյա Պսակյանը, խոժոռելով դեմքը, հարց տվեց նրանց.

— Արդյոք այդ բոլորը ճիշտ է: Միթե Մանուկյան Սարգսին այդպիսի խայտառակություններով և զբաղված:

Հրաչյան վրդովված այդ բոլորից, մտածում եր. «միթե այդ բոլորն, ինչ վոր ասում են, հնարավոր և. ուրեմն այս բոլորը շարունակվում և և մենք անզոր ենք նրան մեր ճանապարհին բերելու, պետք և այդպիսիների դեմ միջոցներ ձեռք առնել:

3.

Զնայած այդ բոլորին, իհարկե աշխատանքը կանգ չեր առնում ցեխում, ընդհակառակը, հարվածայինները, ժամսնակ չկորցնելով, ավելի ուժգին, ավելի համառ եյին աշխատում:

Փականագործ հարվածային Կարապետը սարքոցի մոտ կանգնած, խարտոցում եր յերկաթը: Լավ հարվածային լինելու պատճառով, նա պարզեատրված և մի ղուլգ կոշիկով. վորպես ենտուղիաստ դիմում և տվել կոմունիստական կուսակցության շարքերն անցնելու համար:

Հարվածայիններն իրենց ժողովում մտածում եյին ճեղքվածքները լրացնելու մասին. մի քանիսն ասում եյին, թե քանի վոր մենք ունենք մեղնում փողոցներում քաշ յեկողներ, չենք կարող կատարել արդֆինալանը, իսկ մի քանիսն ել առաջարկում եյին ամենախիստ պայքար մղել գործալիքների, ծուլերի ու սիմուլյանտների դեմ:

Յերկար խոսելուց ու վիճելուց հետո վորոշում են Մանուկյան Սարգսի գործը, վորպես հայտնի և չարամիտ գործալիք, հանձնել ընկերական դատարանին, քանի վոր այդպիսիներն արգելք են հանդի-

սանում արդիինսկանի իրագործման, ուրեմն և հնգամյակը չորս տա-
րում կատարելուն:

4.

Շաբաթ որ եր. արևի ճառագայթներն ընկել էյին գործարանի վրա: Բանվորներն յուզուտ կեպիներով ու բաճկոններով շտապում էյին գործարան: Ահա ժպտաղեմ փակնադործ Կարապետը, վոր գործարան մտնելով սկսեց կարգալ մեծ ու կարմիր տառերով գրված հայտարարու-
թյունը՝ «Այսօր, աշխատանքից հետո կայանալու յե ընկերական դատ. դատի յե յենթարկվելու փականադործական ցեխի բանվոր գործալիք Մանուկյան Սարգիսը»: Կարապետը մի պահ աչքերը հառած նայում է հայտարարության և ապա ժպտաղեմ շտապում է կարմիր անկյուն:

Բանվորներն ու բանվորուհիները, կարդալով հայտարարություն-
նը, ուրախանում էյին, վոր միջոցներ են ձեռք առնվում գործալիքնե-
րի, սիմուլյանտների դեմ, ուրախանում էյին մանավանդ հարվածային
հնտուղիստ բանվորները, իսկ գործալիքներն ու սիմուլյանտները
տրտնջում էյին, վոր իրենց հանգիստ չեն տալիս:

5.

— Վոթեղ ե լինելու ընկերական դատը, ընկեր՝ Հրաչյա, — հարց-
նում էյին բանվորները:

— Կարմիր անկյունում, կարմիր անկյունում, — պատասխանում
եր Հրաչյան:

Բանվորները խումբ-խումբ բարձրանում են աստիճաններով դե-
պի կարմիր անկյուն, իսկ այնտեղ արդեն ըլլորն անցնում են և տեղ
բռնում թատերասրահում, ուր պիտի կայանա դատը:

Թատերասրահի դեմը զարդարված եր բոցավառ դրոշակներով.
բեմի խորքում դրոշակներին մեջ դրված եր Լենինի արձանը, իսկ բե-
մի մեջ տեղը՝ մի մեծ սեղան կարմիր մահուկով ծածկված:

Դատավորները բռնեցին սեղանի շուրջը: Դատավորը, դարբնոցի
բանվոր Մկրտիչ Դարբինյանը կարգաց, թե ինչով է մեղադրվում
բանվոր Սարգիս Մանուկյանը: Կարդալուց հետո սկսվեց դատը: Մա-
նուկյան Սարգիսը, վորպես մեղադրյալ, առանձին նստած եր բեմի ա-
ռաջ: Նա, գլուխը կախ, հուզված ու մոլորված, դիտում եր չորս կող-
մը: Նրա մտքից լինելու ասես չեր անցնում. ել հարբեցողություն, ել
կարտի սեղան, ել անառականոց, ել կոիվներ ու խուլիգանություն:
Գլուխը մեքենայի նման պտույտ եր դալիս, հիշելով իր արածները:
Այդ բոլորը տեսել են իրենց աչքերով. չէ վոր հիմա կասեն, վոր Մա-

նուկյան Սարգիսը հարբեցող է, կարտ է խաղում, ձերբակալված է
յեղել կոիվների ու հարբեցողության համար:

Դատավորն սկսեց հարցեր տալ մեղադրյալ Մանուկյանին.

— Հարվածային ես, ընկեր Մանուկյան:

— Վոչ:

— Քանի պրոդուկ ունես:

— Չգիտեմ:

— Ողի խմում ես.

— Վոչ:

— Կալտ խաղում ես:

— Վոչ:

Հասարակական մեղադրողը հասարակությանը հարցնում է.

— Ընկերներ, հարցեր կան:

— Կան, կան:

— Ասացեք, ընկեր Կարապետ:

Կարապետը հարց է տալիս.

— Արդյոք դու կիրակի որը մի ուրիշի հետ գինետանն ողի չեյիր

խմում:

— Այո, խմում եյի:

— Ասացեք, ընկեր Սիրուշ:

— Ընկեր Սարգիս Մանուկյան, դուք արդյոք հարբած վերա-
դարձել եք տուն և կովի, հայհոյել, ընկերներին անպատվել.

— Այո, այո:

— Ասացեք, ընկեր Պավլի:

— Ընկեր, Մանուկյան Սարգիս, դուք չեյիք, վոր փոխանակ
մեր առաջարկին՝ ցեխի ձեխվածքը լրացնելու, Ուսիկին ել կանչեցիք
և տարաք ձեզ հետ կարտ խաղալու:

Կարմրելով ու ամաչելով պատասխանում է՝

— Վոչ:

Հարցերից հետո հանդես է գալիս հասարակական մեղադրող ըն-
կեր Լուիկ Ավետիսյանը.

«Ընկերներ, Սարգիս Մանուկյանը յերեխա չե, ամեն բան հաս-
կանում է. նրա հետ արդեն մի քանի անգամ խոսել ե պրոֆկոմի նա-
կանում: Նրան հարվածայինները բացատրել են, վոր գործալքությու-
նը հարվածում և ֆուսում է սոցիալիստական շինարարության, բայց
և այնպես ընկեր Սարգիս Մանուկյանը շարունակում է գործալքու-
թյամբ զբաղվել խուլիգանություններ ու խայտառակություններ ա-
նել: Իմ կարծիքով այսօր դատարանը նրան պետք է ամենախիստ
պատիժ տա, դուրս հանելով պրոֆմիության շարքերից, վոր որինակ
լինի մյուս, նրա նման գործալքությամբ պարապող ընկերներին:

Հասարակական մեղադրողից հետո հանդես յեկավ հասարակական պաշտպան ընկեր Յաշկա Մկրտչյանը. նա մեկ-մեկ հիշեց Մանուկյանի հանցանքները, նրա ֆնասակարութունը բանվորական միջավայրի համար, արդֆինսյանի և սոցիալիստական շինարարության համար, վոր, ճիշտ է, Մանուկյանը պարապում է հարբեցողությամբ, կարտ խաղալով, վոր վատ որինակ է ուրիշներին, սակայն նրան պատժելով, դուրս քշելով, մեծ ոգուտ չենք տա վոչ նրան, վոչ էլ մեր գործին. նա նման է հիվանդի, վորին պետք է բուժել: Մենք պետք է ամեն կերպ աշխատենք հասկացներ, համոզել նրան հարբեցողության ֆնասը, խուլիզանության տգեղ պատկերը, ընտանիքին անպատվելը, իր ընկերներից հետ ֆնալը: Չի վոր նա առաջ, յերբ աշակերտ էր, իր ընկերներից յերբեք հետ չեր ֆնացել, այլ ընդհակառակը, աշխատել է իր գործով, իր արվեստով առաջինը լինել: Այժմա էլ պետք է նրա մեջ վառել սոցմրցակցության և հարվածայնության հուրը և այդ ժամանակ մենք բուժած կլինենք ընկեր Մանուկյանին:

Դատարանը, լսելով մեղադրողի և պաշտպանի ճառերը, անցնում է խորհրդակցության: Տասը բողոք խորհրդակցելուց հետո, դատավորը հայտարարում է դատավճիռը.—

«Նկատի ունենալով, վոր բանվոր գործալիք Մանուկյան Սարգիսը հանդիսացել է սոցիալիստական շինարարության և բանվոր դասակարգի ֆնասարար, դրադվել է զանազան տեսակի խայտառակություններով և խոչնդոտ է հանդիսացել արդֆինսյանի իրագործմանը, ընկերական դատարանը վորոշում է՝ վերջին անգամ հանդիմանություն անել ընկեր Սարգիս Մանուկյանին և պրոֆսիությունից վեց ամսով հեռացնել: Առաջարկվում է նրան այդ վեց ամսվա ընթացքում ժողովել իր կամքի ուժը, աշխատել իր սխալներն ուղղելու, այցելելու խեղճակներին, դասերին և ցույց տալ, վոր դեռ ամբողջովին կորած չէ, վոր դեռ կարող է ոգտավետ լինել:

Դատավճիռը կարգալուց հետո Մանուկյան Սարգիսը հուզված, զրուխը կախ, շտապ դուրս եր դալիս կարմիր անկյունից. նրա աչքերին կարծես պատել էր մշուշը. նրա տրամադրությունը չափազանց վատ էր, նա շատ եր տանջվում և մտածում, թե ինչո՞ւ համար զրադվեց այնպիսի խայտառակություններով, ինչո՞ւ այդքան հանդիմանությունների յենթարկվեց, արհամարված բոլորից, մինչդեռ կարող էր ամենից առաջ անցնել և ցույց տալ, վոր կարող է իսկական հարվածային լինել:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն.—Վ. Ծավյան	3
Տավարիչ Սեւմաշ.—Ա.—Հովհաննիսյան	9
* * * * *	17
Քնարերգու այց.— »	19
Տրակտորիստ ընկերոջս.—Ո. Վարոսյան	21
Նամակ բանակից.— »	22
Գյուղում.— »	24
Ձեֆիրա.— »	25
Հարվածայինների կոչը.—Ա. Լուսենց	26
Հարվածայնուհի Սառա տատին.— »	29
Կարմիր բանակայինի վերադարձը.—Ս. Հակոբյան	31
Բանֆակ եմ յեկել.—Ս. Հակոբյան	32
Յերգ տրակտորի որվան.— »	34
* * * * *	36
Վ. Գիծոյան	36
* * * * *	37
Սեւմաշտորոյ.—Ա. Ավեսիֆյան	37
Բանակային ճամբարից »	38
Ելեքտրո-զավոդ »	39
Յերգ հարվածայինների.—Հ. Հակոբյան	40
Սիրում եմ յես.—Դարուրի	42
Այսոր նորից.— »	43
Լեն զավոդի հարվածային բանվորներին.—Դարուրի	44
Սեւմաշյան ցիկլ.—Ա. Խաչենց	45
Ջորադեսը »	47
Վերելքի լերիկա »	50
Ճանապարհը »	52
Հանդիպում »	53
Բալախանի.—Գ. Մալով	54
20 տող »	55
Մի փոքրիկ աղջկա »	56

Կարմիր բանակին. — Մ. Վարդյան	57
Վոդջույն մայիսին. — Մ. Թողբամիսյան	59
Իմ հայրը. — Ս. Սարոյան	60
Իլլիչի մահը »	61
Իմ արտում. — Մ. Մինասյան	62
Ջորադեսը. — Տ. Տերունի	63
«Կալկադսկի». — Գիծոյան	65
Արտեզյան ջրհոր. — Գ. Խաչատրյան	73
Ընկերական դատ. — Խ. Դարուրի	82

Ответственный редактор
В. К. Цовьян
Техредактор
Г. М. Маркарян

№ 2035

X

Сд. в наб. 15.1 — 1932 г.
Сд. в печат 1/VI — 1932 г.
Объем 5 1/2 печ. листа
Тираж 1500 экз.

ПРОЛЕТАРСКИЙ
ПОЧИН

14221-

Գինը
цена 1 ԲՈՒԲ.
руб.

Apr
3-20



На армянском языке



И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԴՐՈՊՆԱԿԱՆՔ

ՌԱՍՏՈՎ-ԴՈՆ, ՍՈՍՎՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ., 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)

wp /
BM /

ՀՀ Ազգային գրադարան



NL0377760

72.438

3-204a